

Ա. ԿՈՂԵՆԿՈՎԱԿԻ
Վ. ԲԵԼՈԼԻՊԵՑԿԻ

1877—1878 թվերի
ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ
ՊԱՏԵՐԱԶՄԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ

9(47)

4-64

2979

Կողեմական. Խ.

1877-1878 թվականի մուս-

թուրքական աշխարհ/բաշխ.

5 | ա:

2 | չ

450

Ա. ԿՈԼԵՆԿՈՎՍԿԻ
Վ. ԲԵԼՈԼԻՊԵՑԿԻ

9/47 16

Կ-64


ԱՄՓԱԼԻ Ե 1889 *

A II
325591

1877—1878 ԹՎԵՐԻ

ՌՈՒՍ-ՇՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

2929



ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՅԱՅՈՒԹՅՈՒՆ

1940

Դիմ. երամ. Ա. Կոլենկովսկի և Վ. Բելոլիպեցկի.

1877—1878 թվ. Երի Ռուս-Թուրքական ՊԱՏԵՐԱԶՄԸ :

Հեղինակները տալիս են 1877—1878 թ. թ. Բալկանյան և Կովկասյան ռազմաբնակչում տեղի ունեցած պատերազմի համառոտ ոլատմական տկնար-էր և նշում են նրա նշանակությունը ռազմական արվեստի պատմության մեջ:

Դրանում նուխանշված ե ԲԴԿԲ Հրամանատարական ու պետկազմի և զին-գործական տեսակետից պատրաստված քաղաքացիական ընթերցողի համար:

А КОЛЕНКОВСКИЙ
В. БЕЛОЛИПЕЦКИЙ

Русско-турецкая война 1877-1878 г. г.

Гиз Арм. ССР, Ереван, 1940 г.

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐՆ ՈՒ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Յարական Ռուսաստանը XVIII — XIX դարերի ընթացքում Թուրքիայի դեմ պատերազմներ եր մղում՝ նպատակ ունենալով վորպես դաղութ զավթել Բալկանյան թերակղղու ոլավոնական յերկրները և կոստանդնուպոլոլիսն ու նեղուցները, վորոնք Սև ծովից տանում են դեպի Միջերկրական ծովը, վորպեսզի իր նախատորմիղն աղատ յելք ունենա դեպի համաշխարհային առևտրական ուղիները :

«ՅԵ՛Վ Կոստանդնուպոլիսը նվաճելուն, և! Ասիայի ավելի մեծ մասը նվաճելուն ցարիղմը ձղում է դարերից ի վեր՝ սիստեմատիկաբար վարելով համապատասխան քաղաքականություն և գրա համար ողտագործելով մեծ պետությունների միջև յեղած բոլոր հակասություններն ու ընդհարումները . . .»¹⁾ :

Թուրքական հողերը զավթելու իր ձղուման մեջ Ռուսատանն ի դեմս Անգլիայի և Ավստրո-Հունգարիայի հանդիպեց ուժեղ մրցակիցների : Ավստրո-Հունգարիան, արտաքսված լինելով իտալիայից և Գերմանիայից, ինքն եր ձղում դեպի Բալկանյան թերակղղի, վորպեսզի իր համար ճանապարհ բանագետի Սալոնիկ՝ Եգեյան ծովում :

Ռուսաստանի համար անհաջող Արևելյան պատերազմից հետո (1853—1856 թ. թ.) ցարական կառավարությունը համոզվելով, վոր Ռուսաստանը հետամնաց և, ոտխպած յեղավ միշտը ուժիքորմներ մտցնել . դյուղացիններին աղատել կալվածա-

¹⁾ Լենին, Յերկեր, հատ. XIX, ոռու, հրատ. եջ, 281:

տերերից ունեցած ճորտային կախութից, մտցնել յերդվյալների դատարաններ, ընդհանուր դինվորական պարտականություն և այլն: «Ճորտատիրական իրավունքը վերացվելուց հետո արդյունաբերական կասլիտալիզմի զարդացումը Ռուսաստանում սկսեց շավական արագ ընթանալ, չնայած ճորտատիրության մնացորդներին, վորոնք դեռ խոչընդոտ եյին հանդիսանում այդ զարդացմանը...»¹⁾: Բնակչության դիխավոր մասսայի չքավորության հետևանքով արդյունաբերության արտադրանքը ներքին շուկայում չեր սպառվում, և այդ բանն իր հերթին կասլիտավուտներին մղում եր դեպի արտաքին շուկաներ, վորուկ կարողանային վաճառել իրենց ապրանքը: Այդ շուկաներից ամենահարմարն ու ամենամոտիկը Բալկանյան թերակղղին եր, ուստի բուրժուազիան սիրով աջակցում եր կառավարության ձեզմանը՝ այդ թերակղղին զավթելու գործում:

1875 թվին ցարական կառավարությունը դանելով, վոր Արեկյան պատերազմից հետո Ռուսաստանի արդեն բավականաչափ ամրապնդվել ե, վորոշեց Բալկանյան թերակղղու նկատմամբ ակտիվ քաղաքականության անցնել: Յարական կառավարությունը հույս ուներ, վոր հաջող պատերազմ մղելով թուրքիայի դեմ, վորին կոչում եյին «Հիւլանդ մարդ», կամրապնդի իր իշխանությունը Ռուսաստանի ներսում և կճնշե այն ուժեղ դժոհությունը, վոր սկիզբ եր առել ուստ ժողովրդի մեջ, յերբ կառավարությունը, փոխանակ ուժիքումների հետադարձ զարդացման՝ սկսել եր ճնշել նաև այն աննշան քաղաքացիական աղատությունները, վոր տրվել եյին ոկղում: Յարական կառավարությունն իր քաղաքական յելույթի համար վորուես անիթ ողոտագործեց Հերցոգովինիայի և Բոսնիայի ոլավոն զյուղացիների ապատամբությունը թուրք կալվածատերերի դեմ:

Այդ ժամանակ թուրքիայի Յեվրոպական մասի 18 միլիոն բնակչությունից թուրքեր եյին միայն 2 միլիոն, ուղավոններ (սերբեր, բուլղարներ)՝ 6 միլիոն, մնացած բնակչությունը բաղկացած եր ոռոմիններից, հույներից, ալբաններից, այսինքն՝ թուրքերը կազմում եյին բնակչության $\frac{1}{9}$ մասը, բայց տիրապետում եյին Ավարելահողերի մեծ մասին: Թուրքական իշխանության և թուրք կալվածատերերի տնտեսությունն

¹⁾) Համ.Կ(Բ)կ պատմություն, Համառու դասընթաց, հայերեն հրատ. եջ 7:

ու ճնշումը վոչ թուրք բնակչության մեջ առաջացնում ելին հաճախակի ապստամբություններ, վորոնք թուրքերը ճնշում ելին մեծ դաժանությամբ։ 1856 թվի Փարիզյան դաշնագրի համաձայն, վորը վերջ դրեց Արևելյան պատերազմին, Բալկանյան թերակղում առլող քրիստոնյա բնակչությունը վայելում եր յեվրոպական պետությունների հովանավորությունը, ըստ վորում Թուրքիան պարտավոր եր քրիստոնյաների դրությունը բարելավելու ուղղությամբ մի չարք միջոցներ ձեռք առնել, սակայն նա այդ պարտավորությունը չեր կատարել։ Առանց Մուսաստանի դրդման չեր, վոր 1876 թ. բոսնիացիներին ու Հերցոգովինցիներին Թուրքիայի դեմ ողնության դուրս յեկան Զերնողորիան և սոլա Սերբիան, վորը թուրքերից վասուալային կախման մեջ եր դտնվում։

Թուրքական լծից աղատվելու համար բալկանյան ոլավոնների մզած ոլայքարը ոռու հասարակության մեջ համակրանքի հանդիպեց։ Մոսկվայում, վորտեղ մեծ դործունեյություն ծավալեցին սլավոնաֆիլները, վորոնք միշտ կողմնակից ելին Մուսաստանի իշխանության տակ բոլոր սլավոններին համախմբելու, սակած այդ Սլավոնական կոմիտե, վորը դրամի ու իրերի նվիրատվություններ եր հավաքում և կաղմակերպում եր կամավորներ, զենք ու հանդերձանք Սերբիա ուղարկելու գործը։ Բնդամենը ուղարկեց մոտ 20 միլիոն ոռուրլի և 6000 զինվոր ու սոլա։ Արտասահմանյան ոլավոններով հրապուրվելու այդ յերեռութը շուտով պաղեց, սակայն ցարական կառավարությունն այն պաշտպանեց ու ողտագործեց իր հափշտակողական ձգտումները քողարկելու համար։ «... Յեփքոպային հայտարարվեց, թե այդ պատերազմը ձեռնարկված է քրիստոնյաներին թուրքերի յերկարամյա տիրակալությունից աղատելու համար, իսկ ոռու ժողովրդին հայտարարեցին, թե պատերազմը մզվում է համացեղ սլավոն յեղբայրներին թուրքական լծից աղատելու և Մուսաստանյան սրբազն կայորության դիրկը վերադարձնելու համար»¹⁾։

Չնայած Մուսաստանի ողնությանը՝ 1876 թ. հոկտեմբերին սերբերը ջախջախվեցին։ Յարական կառավարությունը Թուրքիայից պահանջեց դադարեցնել պատերազմական դործողության դիրկը վերադարձնելու համար»¹⁾։

¹⁾ Կ. Մարքս յեվ Ֆ. Ենգելս. յերկեր, հ. XV, ոռու, հրատ. եջ 409։

թյունները և մորիլիղացիայի յենթարկեց իր բանակի մի մասը, սակայն սիրո չարեց պատերազմ սկսել և Անդլիայի ու Ավատրո-Հունգարիայի հետ միասին բանակցությունների մեջ մասավ թուրքիայում սլավոնների վիճակը բարվոքելու մասին:

Թուրքիան Սերբիայի հետ զինադադար կնքեց և սկսեց նուռաստանի հետ սլատերազմելու ուժեղ նախաղատրաստություն տեսնել, դիտավորյալ կերպով բանակցությունները ձգձղելով է, վերջապես, 1877 թ. ապրիլի 7-ին մերժեց այն բոլոր առաջարկությունները, վոր մշակվել Ելին Լոնդոնում յելլրուղական պետությունների կոնֆերանսում։ Դրան ի պատասխան՝ ապրիլի 24-ին Ռուսաստանը թուրքիային սլատերազմ հայտարարեց։

Անդլիան Սերբիային և Հունաստանին հետ սլահեց պատերազմի մեջ մտնելուց, իսկ Ռումինիային դաշնակցելու հրավիրել՝ ցարական կառավարությունն ինքը չեր ուղում, քանի վոր մտաղիր եր նրանից հետ խելել Բեսարաբիայի մի մասը, վոր կորցրել եր անհաջող Արևելյան սլատերազմից հետո։ Ռումինիայի հետ միայն համաձայնություն եր կնքվել, վոր ռուսական զորքերին թույլատրվի ազատ անցնել դեպի Դանուբ, վոր արյն ժամանակ հանդիսանում եր թուրքիայի սահմանը։ Ավրատրիայից ռուսական կառավարությունը չեղոք մնայու վրատահացում ստացավ, պայմանավորվելով, վոր սլատերազմից հետո նրան զիջի Բոսնիան ու Հերցոգովինիան և Բալկանյան թերակղղում մեկ խոշոր սկետություն չստեղծելու պարտավորություն տվեց։ Մյուս մրցակցին՝ Անդլիային նա հանդստացքեց՝ իսստանալով կոստանդնուպոլիսը չգրավել։

Այսպիսով անհաջող քաղաքական նախաղատրաստումը այդ պատերազմում Ռուսաստանին զրկեց դաշնակիցներից, ինչպիսիք եյին Սերբիան ու Հունաստանը, և նրան կտշկանդեց անձեռնուու պարտավորություններով։ Զորահավաքից հետո համարյա կես տարով պատերազմի սկիզբը ձգձղելու հետևանքը յեղափայն, վոր թուրքիան Անդլիայի ողնությամբ ռուսների դեմ ժողովեց իր բոլոր զորքերը, վերապինեց նրանց նոր հրացաններով ու թնդանոթներով և անհրաժեշտ պաշտրներ պատրաստեց։ Այդ հանդամանքը ռուսական բանակի սկլրնական ռազմական անհաջողությունների պատճառ դարձավ, ձգձղեց սլատերազմը, վորի հետևանքով պատերազմը վերջացնելուց հետո Ռուսաստանը քաղաքական չնշին շահ ձեռք բերեց։

Պատերազմ հայտարարելու որը սուսական զորքերը յեվրոպական ռազմարեմում մտան Ռումինիայի սահմանները, իսկ Կովկասյան ռազմարեմում, ունտական սահմանն անցնելով, մը տան թուրքահայաստանի սահմանները:

ՊԱՏԵՐԱԶՄՈՂ ԿՈՂՄԵՐԻ ԶԻՆՎԱԾ
ՈՒԺԵՐԻ ՎՀԻՃԱԿԲ

1853—1856 թվերի անհաջող Արևելյան պատերազմից հետառաւսական բանակում մի շարք նշանակալի ռեֆորմներ ելին տեղի ունեցել: Զինվորի ծառայության ժամկետը 15 տարուց կը ճանավել եր 7 տարու, իսկ հետո, 1874 թվին մտցվել եր ընդհանուր զինվորական ծառայություն՝ Յ տարի բանակում և 10 տարի պահեստային ծառայության ժամկետով: Ծառայության կարճ ժամկետը բանակը «պարագ դասից», ինչպես նրան անվանում եր Լ. Ն. Տոլստոյը («Պատերազմ և խաղաղություն», մաս IV, 1 բաժին) դարձրեց մի զպրոց, վորն իր շարքերի միջով բաց եր թողնում յերիտասարդ բնակչության ընտիր մասը: Բանակում սկսեցին դրազիտություն սովորեցնել, մարմնական պատիժներն իրավաբանորեն նվազագույնի հասցվեցին: Սահմանվեցին զինվորական ոկրուղներ, վորոնք ապակենորոնացնում ելին զինվորական մինիստրության աշխատանքը: Հատուկ միջոցներ ձեռք առնվեցին սպաների կրթական մակարդակը բարձրացնելու համար: Կաղետական կորպուսներն իրենց զինվորական խստավարժությունով վորխարինվեցին յոթնամյա զինվորական դիմնազիաներով, վորտեղ միայն ընդհանուր կրթություն եր տրվում, իսկ զինվորական պատրաստությունը վորխարդրվել եր յերկույթերեքամյա զինվորական ուսումնարանները: Կարճ ժամկետում սոլաներ պատրաստելու համար ծավալվեց յունկերական ուսումնարանների ցանց, վորտեղ դորամասերից մտնում ելին ցածր կրթություն ունեցող կամավոր զինվորազրածները: Զինվորի ու զորամասերի ինչպես ալահականաման, այնպես ելուսուցման յեղանակները մշակելու դորձում իր պրական զործունեյությամբ խոշոր մասնակցություն եր ունենում Մ. Դրազոմիրովը, վոր զինվորական ակադեմիայի պրոֆեսոր եր, իսկ հետո՝ 14-րդ հետեակ զինվորական պետ:

1877—1878 թվերի պատերազմը վրա հասավ այս ժամանակ, յերբ այս ուժորմները դեռ բոլորովին նոր եյին սկսվել, և նը-ըանց աղղեցությունը նշանակալից լինել չեր կարող: Այսպէս, յերեք տարվա ընթացքում սովորած մարդկանց թիվը հասել եր ընդամենը 832.000 մարդու և հարկ յեղավ դաշտային դորա-մասեր մորիլիղացիայի քննթարկելու համար գենքի կոչել աշ-խարհազորի ռազմիկներին:

Պատերազմից առաջ ցարական Ռուսաստանը 750.000 մար-դուց բաղկացած մի բանակ ուներ:

Հնդհանուր դիմուրական ծառայության շնորհիվ ռուսական բանակը հիանալի մարդկային կազմ ուներ, մի բան, վոր չի կա-բելի ասել սպաների վերաբերյալ, վորոնք մեծ մասամբ աղնք-վականության միջից դուրս յեկած անուսում մարդիկ եյին, մարդիկ, մանավանդ հետեւազորի սպաները, վորոնք վոչ մի զինվորական կրթություն չեյին ստացել: Բարձրագույն հրա-մանատարական կազմը—դիմերաները— բաղկացած եր Նիկոլայ Ա-ի նախառեֆորմյան շրջանի դործիչներից և աչքի յեր ընկ-նում սահմանափակությամբ, մեծ պատերազմ վարելու անփոր-ձությամբ և ռազմական լայն հորիզոնի բացակայությամբ:

Ռուսական բանակի դլուխ եր կարգված թաղավորի յեղ-բայրը՝ մեծ իշխան Նիկոլայ Նիկոլայեվիչը, վորի զինվորական պատրաստությունը սահմանափակված եր հեծելողորային շա-րային ծառայությամբ: Նա ստրատեգիական հարցերի քննու-թյամբ չեր զբաղվում և վորոշումներ ընդունում եր դեպքից դեմք:

Դաշտային շտաբի պետ եր նշանակված վարչական մասում ծառայած հին բյուրոկրատ դեն. Նելոկոյչիցին: Պատերազմի ժամանակ նա զբաղվում եր վարչական ու տնտեսական հարցե-րով՝ չմոռանալով նաև իր անձնական շահերը: Շտաբի ուղերա-տիվ աշխատանքի զեկավարությունն ամբողջապես իր ձեռքը վերցրեց նրա ողնական դեն. Լելիցին: Ռազմական լայն հո-րիզոն չունենալով՝ նա աչքի յեր ընկնում անխոհեմ, կովարար բնավորությամբ, աշխատանքի մեջ՝ բծախնդրությամբ: Նա, լի-նելով չտիազանց մեծամիտ, բանակում հեղինակություն չու-ներ և շատ խառնաշխիություն եր մտցնում դլսավոր հրամա-նատարի շտաբի աշխատանքի մեջ: Թե ինչպես եր տարվում աշ-խատանքը՝ կարելի յե դատել հետեւյալ փառտից: Ռումինական

իշխան կառլի հեռաղիրն այն մասին, թե Ոսման-փաշան վեր-
դինից շարժվում է դեպի արևելք (այդ շարժումն ուղամինները
նկատել ելին Դանուբի ձախ ափից), ընդունել եր իշխան Նիկո-
լայի կամերդիները, սակայն այդ հեռաղիրը վոչ նրա ձեռքն եր
ընկել, վոչ ել շտարում վորեե մելի ձեռքը. հեռաղիրն առանց
վորեե նշումի արխիվում դտել ելին միայն պատերազմից հետո:

Բանակի սպառաղինումը հնացած եր: Հետեակն ուներ
երնկա հրացան, 15 մմ., վոր վերափոխված եր փողից լցվող
շտուցերից և 600 քայլի նշանացույց ուներ: 1870 թվից սկսուծ
պատրաստվում եր Բերդանի 10 միլիմետրանոց հիանալի հրա-
ցանը, վոր մինչև 2000 քայլ հեռահարություն ուներ, սակայն
նրանով զինված եր բանակի 10 օ/օ-ից վոչ ավելին: Հրետանին
ուներ 1867 թվի բրոնզե թնդանոթներ՝ յերկու կալիբրի (107
մմ. և 79 մմ.), 1800 և 1400 մետր հեռահարությամբ: Ռում-
բերն անկատար ելին, նրանք դիրքերի վրա շատ թույլ ելին
ներդործում: Ռուս զինվորն իր հետ ունենում եր 60 փամ-
փուշտ, զանազան տեսակի գումարելներում ու պարկերում յու-
րաքանչյուր հրացանի համար 120 փամփուշտ եր բերվում:

Թեև ինչպես հրածդային, այնպես ել մանավանդ հրետանա-
յին սպառաղինության տեսակետից ուռսական բանակը զիջում
եր թուրքականին, սակայն թուրքականից ավելի լավ եր մարդ-
ված: Բայց և այնպես սպառերազմը ցույց տվեց, վոր ուռսա-
կան բանակի տակտիկան խիստ հնացած եր և այն ժամանակվա-
սպառաղինության վիճակին չեր համապատասխանում: Մարտի
ժամանակ հետեակը դերադատում եր կիրառել խիտ շարքերը—
վաշտային շարքեր՝ առջեռում նոսր չղթա: Այդ պայմաններում
ուռսները մեծ կորուստներ ելին կրում ավելի լավ սպառաղին-
ված թուրքերից, մանավանդ, վոր ուռսական հետեազորն իր
հետ բահեր չեր կրում: Հետեակը կրակ շատ քիչ եր ուղարկու-
թում, դերադատում եր դործել սվինով: Գրոհում եր առանց
կրակ բանալու, իսկ սպառաղանվելիս հակառակորդին խիստ եր
հակաղը ռոհով:

Հրետանին վատ եր կրակում, հետեակի հետ համաձայնեց-
ված դործողություն չուներ: Հեծելազորը հետեազորի վրա դը-
րոհելը համարում եր անհնարին, ինքնուրույն դործողություն-
ների չեր սպառաստվում և կովի մեջ սահմանափակվում եր
հետեակի պաշտպանությամբ ու նրա առաջ մոտակա հետա-
խուզություն կատարելով:

Ոռւսական բանակում իրավացիութեն այն կարծիքն եք տիրում, վոր հարձակումը պաշտպանվելուց ավելի լավ է, սակայն, վորովհետև մարտը վատ եր դեկավորում և Հրետանին հետեւակելին չեր սպառապանում, հաճախ հարձակումը ծանր անհաջողությունների յեր հասցնում:

Չնայած նրան, վոր թուրքերը ոռւսական զորքերից անհամեմատ ավելի լավ եյին զինված, ոռւսական գլխավոր շտաբը թուրքական ուժերի թուլության մասին ունեցած իր զործակալային տվյալների հիման վրա մտածում եր ամենակարծ ժամանակամիջոցում հաշիվ տեսնել նրանց հետ, դտնելով, վոր սպառերազմը մի ուղմական զրոսանքի յե նմանելու:

Թուրքական բանակը (խաղաղ ժամանակ մոտ 450.000 մարդ և մինչև 100.000 մարդ աշխարհազոր) լրացվում եր մուսուլման քնակչության զինվորական պարտադիր ծառայությամբ, սակայն միջոցների սպակասության սպատճառով վարժեցրած մարդկանց թիվը մեծ չեր: Բանակի զորահավաքն սկսվել եր վեռ 1875 թվին և լիակատար լարման եր հասել 1876 թվի նոյեմբերին: Բացի կանոնավոր բանակից, ուղմական զործողություններին թուրքերի կողմից մասնակցում եյին զանազան մուսուլմանական ժողովուրդների անկազմակերպ չոկատներ—չերքեղներ, վորոնք կոչվում եյին բաշիրողուկներ, քրուեր և այլն:

Թուրք զինվորներն իրենց մարտական հատկություններով լավ ուղմանյութ եյին, բայց վատ եյին վարժեցրած, նրանց մի զգալի մասը, վոր դտնվում եր Յելբոպական թուրքիայամ, մասնակցել եր Սերբիայի ու Զերնողորիայի դեմ մղած կոփիզներին, վորաեղ և մարտական փորձ եր ձեռք բերել: Թուրքական շարքային սպայությունը նույն դասակարգից եր, ինչ վոր զինվորները, այսինքն դուրս եր յեկել դյուղացիությունից և այդպահհովում եր. անհրաժեշտ մարտական միաձուլությունը: Թուրք սպաները լավ շարային սկսեր եյին, չնայած նրանցից վոմանք նույնիսկ անդրադեռ եյին:

Ինչ վերաբերում ե թուրքական բանակի բարձր հրամանառարական կազմին, սկսեք ե նշել, վոր նրա մի մասը յելբոպական յերկրների բանակներից դուրս յեկած բախտախնդիրներ եյին, իսկ մյուսները՝ տղեղ փաշաներ: Ինչպես առաջինները, այնպես ել յերկրորդներն իրենց դիրքին եյին հասել բանարկությունների միջոցով, ողղեցիկ անձանց առաջ հաճոյանուու:

միջոցով և աչքի եյին ընկնում շահամոլությամբ, ինտրիգա-
նությամբ և ստորաքարշությամբ, այսինքն այն բոլոր հաս-
կություններով, վոր հատուկ են քայքայվող դասակարգին:

Թուրքական բանակի կազմակերպիչներն եյին դերմանական
հրահանգիչները, վորոնք չեյին կարողացել բանակը ռազմա-
կան պատրաստության անհրաժեշտ աստիճանի հասցնել:

Հետեակի 70 օ/օ-ը զինված եր ամերիկյան 10 միլիմետրա-
նոց հրացաններով, վորոնց նշանացույցը 1800 քայլի յեր, վորք-
մասն սմներ 15 միլիմետրանոց հին հրացաններ, վորոնց նշանա-
ցույցը 1300 քայլի յեր: Հեծելազորն ուներ արագ լցվող հրա-
ցաններ: Ամերիկան առատորեն փամփուշտ եր տալիս: Հրետա-
նին ուներ մեծ մասամբ սլողակառե, այն ժամանակվա համար
հեռահար թնդանոթներ կրուսլի դործարանից, վորոնք 4—5
կիլոմետրի վրա եյին խփում: Կազմակերպված թիկունքի և մա-
նավանդ պարենի պահեստներից ու զինանոցներից տեղափոխու-
թյաններ կատարելու միջոցների բացակայությունը թուրքա-
կան բանակին դարձնում եր ընդարձակ մաներների անընդու-
նակ բանակ: Դրա հետեանքով սկատերազմի թուրքական սլան-
ներն ավելի շատ հիմնված եյին պաշտպանության, քան թե
հարձակման վրա: Մարտում իրենց հաջողությունը նրանք հիմ-
նում եյին խրամատներից տեղացող հրացանային ուժեղ կրակի
վրա:

ՌՈՒՍԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ԶՈՐԱՀԱՎԱՔԸ

ՅԵՎ ԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄԸ

(Սխեմա 1)

Յուսամլան բանակի զորահավաքը կատարվում եր մաս-
մաս, վորքան վոր պատերազմի ընթացքում պարզվում եր ար-
գեն զուրս բերած ուժերի թուլությունը: 1876 թ. նոյեմբերին
զորահավաքի եյին յենթարկված 20 հետեակ և 8 հեծյալ դիվի-
զիաներ, 3 հրաձիղ և 2 սակրավոր բրիդաղներ, բերդային, ոլա-
հեստի և կազակական զորամասեր, ընդամենը՝ 390·000 մարդ:
Դրանցից կազմակերպվեց 6 բանակային կորպուս՝ յուրաքան-
չյուրում յերկուական հետեակ ու մեկական հեծյալ դիվիզիա, և
առանձին կովկասյան կորպուս: 1877 թվի առլրիդ 24-ին պատե-
րազմ հայտարարելու իրուսաստանում ու կովկասում զորահա-

վաքի յեր յենթարկված 9 հետևակ և 4 հեծյալ դիվիզիա, առողջութեասի սկզբին՝ ելի $10\frac{1}{2}$ հետևակ և 2 հեծյալ դիվիզիա: Հնդամենը զորահավաքի յեր յենթարկված ամբողջ ռուսական բանակի մոտ $3\frac{1}{4}$ մասը, և 1878 թվին զենքի տակ կար չ-800.000 մարդ, սակայն գլխավոր ռազմարեմում՝ Բալկանյան թերակղղում կար միայն 500.000 մարդ:

Առաջին զորահավաքը, վոր հայտարարվեց 1876 թ. նոյեմբերի 14-ին, ինչպես նաև բանակը սահմանի մոտ կենտրոնացնելը տեղի ունեցան դժիմարին պայմաններում: 1876 թվին Ռուսաստանում կար ընդամենը 17.000 կիվոմետր յերկարությամբ յերկաթուղի, վոր կառուցել ելին մասնավոր սեփականատերերը՝ առետրական նկատառումներով: Դեպի հարավ-արևմտյան սահմանը տանում ելին միայն 3 դիմ, վորոնցից միայն մեկն եր ժոտենում սահմանադիմին Ռուսականի կայարանում: Դեպի կովկասաննունաշղթայի առաջ, Վլադիկավկազում (Որջոնիկիձե) :

Բոլոր յերկաթուղիները միաուղի ելին, կառուցելիս հաշվի շել առնված ուժեղ յերթեեկություն (թեթև ոհլուեր, թույլ զորդացած կայարաններ, ջրամատակարարումը ջրհորներից և այլն): Զորամասերի փոխադրությունների ոլլան չկար: Մորի վիզացիոն փոխադրությունների հենց սկզբին, 1876 թ. նոյեմբերի 17-ին, կայարաններում հսկայական կուտակումներ ստեղծվեցին (Ժմերինկայում 21 դնացք), ընդամենը 176.000 հոգի սահմանատայինների փոխադրությունը ձգձգվեց մինչև գեկտեմբերի 2-ը:

Զորս կորպուս սահմանադրուխը փոխադրելը և 3 կորպուս Մոսկվայի կորպուսից կիւի կորպուսը փոխադրելը (սահմանագլուխ դնացողներին փոխարինելու համար) տեղ 24 որ: Աւժեղ սառնամանիքներն ու ձյունակույտերը խանդարեցին դնացքների յերթեեկությունը: Ժմերինկա կայարանում շարժումը կանգ առավ, մի ամբողջ դիվիզիա ցած իջեցվեց և փոխադրվեց բոլորից հետո: Առ 26 դեկտեմբերի (զորահավաքի 42-րդ որը) 2094 դնացքով փոխադրվել եր ընդամենը 254.000 մարդ:

Զորահավաքի դանդաղությունը և սահմանադիմին բանակի քառոսային կենտրոնացումը ստրատեգիական հետևանքներ չունեցան նրա համար, վոր պատերազմն սկսվեց զորահավաք հարտարարելուց 5 ամիս հետո միայն:

ԹՈՒՍԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ԹԻԿՈՒՆՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Բանակը Բեսարաբիայում կենտրոնացնելիս ինտենդատությունն ամբողջ բանակի համար բաղային պահեստներ հիմնեց 35—55 որվա պաշարով, այնուհետև յենթաղբվում եր միջանկյալ բաղային հիմնել Ռումինիայում։ Զորքերն ունեցին միայն զնդային ու դիվիզիային դումակներ, վորոնք կաղմված եյին հնացած յերկծի ու քառածի սայլերից, և պաշարներ պիտի ըստամային ազատ վարձովի բանակային դումակներից, վորոնք կազ Եյին ողահղանում ողահեստների հետ։ Այդ դումակների աշխատանքն ընթանում եր մեծ դժվարություններով ու ընդհատումներով, սայլվորներն իրենք ունետք և կեր հայթայթեցին իրենց ձիերի համար և մթերք՝ իրենց համար, ուստի նրանցից շատերը մեծ զրկանքներ եյին կրում և նույնիսկ, սայլերն ու ձիերը թողնելով, փախչում եյին։

Դեսի Դանուր փոխադրելու համար կար միայն մեկ յերկաթուղի—Ռւմինի, Յասսի, Բրախլով, Բուխարեստ։ Ռումինական տերիտորիայում գտնվող զծամասն ավելի նեղ, յելրուսական ռելսեր ուներ, և անհրաժեշտ եր լինում Ռւմինի կայարանում բեռը փոխադրել ուրիշ զնացքների վրա, ուստի շուտով այդ կայարանում վագոնների ու բեռների կուտակումներ առաջան։ Ռումինական ճանապարհները, վորոնք վատ եյին կառուցված և աղքատիկ կահավորված, շուտով լիակատար քայլայման հասան ուժեղ յերթեկությունից, վոր զուգադիսկ գետերի ղարնանային հորդացմանը։ 12 միավոր արագության փոխարեն տալիս եյին 7—4 և ավելի պակաս միավոր արագություն։ Պատերազմի ժամանակ ոռուսներն ուշացումով ձեռնաժուխ յեղան յերկու նոր յերկաթուղիների կառուցման—Բենդերից մինչև Գալացա և Բուխարեստից մինչև Զիմնիցա։

Յերկաթուղիների աշխատանքը բոլորովին կարդավորված չեր։ Զինվորական հաղորդակցությունների վարչությունը չեր կարողանում կարդավորել փոխադրությունները։ Բեսարաբիայում հավաքած պաշարները բանակին հասցնել չեյին կարողանում, և մեծ ժամանք փչացան։ Նրանց մնացորդները ծախծըլել վեցին։

Ռումինիայի հետ համաձայնությունը կնքվել եր պատերազմ հայտարարելուց քիչ առաջ միայն, դրա պատճառով ել

քնտենդանտությունը չկարողացավ ժամանակին նումինիստյում պաշարներ սլատրաստելու դորձն սկսել: Այդ դորձը հանձնարարիած եր «Գրեղեր, Գորվից և Կողան ընկերությանը»: Նա մթերք ու թխած հաց եր դնում և փոխադրում պահեստները և ուղղակի զորամասերը: Յերբ զորքը Բուլղարիա մտավ, ընկերության դործունեյությունը շարունակվից սկզբում միջանկյալ բաղան լրացնելու, իսկ հետո նաև զորքերին մատակարարելու հոմար: Իր աշխատանքի համար ընկերությունն ստանում եր ինքնարժեքը և 33 % կաղմակերպչական ծախսերի համար: Բնակերությունն իր պարտավորությունը կատարել չկարողացավ: Զորքերից անընդհատ դանդատներ եյին ստացվում, մանավանդ, վոր նրանց արգելվում եր մթերք գնել, վոր բավականաչափ կար ընակչության մոտ:

Ռուսական զորքերն այդ սլատերազմում փոեր չունեյին. Հացի փոխարեն Ռուսաստանից բերում եյին պաքսիմատ (սուխարի), յենթաղրվում եր, վոր կանդառներում դորքերն իրենք հաց կթիւն: Պաքսիմատը լուրջ հիվանդությունների սլատճառ դարձով. ամբողջ պատերազմի ընթացքում հիվանդություններից մեռան 45·000 մարդ, մինչդեռ սովանվածների ու վերքերից մեռածների թիվը հասավ 16·500-ի:

Թիկունքի միանդամայն անբավարար աշխատանքը ոռւսուկան բանակին լիակատար քայլքայման չհասցրեց միայն չնորհիվ այն բանի, վոր Բուլղարիայում բավականաչափ կենսամթերք պահպանվեց, և այն պատճառով, վոր ոռւսական զորքերը հարձակման ժամանակ իրենց ձեռքն եյին դցում թուրքական հարուստ ոլաշարները: Սակայն յերկարատե կանդառներում (իսկ այդ հաճախ եր տեղի ունենում) կաղմակերպված թիկունքի բացարձայությունը ոռւսական զորքերին ստիպում եր մեծ զրկանքներ կրել:

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՌԱԶՄԱԲԵՄԸ ԲԱԼԿԱՆՅԱՆ ԹԵՐԱԿՂՋՈՒՄ

(Սխեմա 1)

Բալկանյան թերակղզու վրա սազմական զործողությունները տեղի եյին ունենում Բուլղարիայում, վորը Բալկանյան լեռներով բաժանված եր յերկու մասի՝ Հյուսիսային և Հարավային: Հյուսիսային Բուլղարիան ծածկված ե Բալկանյան լեռնաշղթայի ճյուղավորություններով, վորոնք Դանուբ դետին

մոտենալով, առաջացնում են նրա աջակողմյան բարձր աղբը (մինչև 200 մետր և ավելի բարձր)։ Այդ ամբ կտրտված է արագահոս զետերի հովիտներով, զետեր, վորոնք լեռներից հոսում են Դանուբի մեջ։ Բալկանյան լեռներն ամենամեծ բարձրության (2375 մ.) հասնում են արևմտյան մասում և, դեպի արևելք դնալով, ցածրանում են։ Ռադմարեմի սահմաններում լեռների վրայով մի քանի հարմար լեռնանցքներ կային։ Հարավային Բուլղարիան իրենից ներկայացնում է վոչ լայն մի հովիտ, վոր շրջապատված է Մեծ ու Փոքր անտառապատ Բալկաններով և վոռողվում է Մարիցա ու Տունջեյ զետերով։ Նրա մի մասը Կաղանլըկ քաղաքի մոտ Վարդերի հովիտ անունն է կրում։

Դանուբ զետեն ու Բալկանյան լեռները պաշտպանության համար հարմար սահմանադիմ ելին հանդիսանում։ Դանուբի սփին կային մի քանի թուրքական հին բերդեր, վորոնք մտնում ելին Բուլղարիայի արևելյան մասի ամբոցների ուժեղ քառանիցունու կաղմի մեջ։ Դրանք ելին՝ Ռուչչուկը, Սիլիստրիան, Յումլան, Վարնան։ Պատերազմի ժամանակ թուրքերը, Ռազզրադի մոտ ամրացրած ճամբար շինելով, ամրացրին այդ քառանիցունու արևմտյան կողմը։ Հյուսիսային Բուլղարիայում կար միայն մեկ յերկաթուղի, վոր Ռուչչուկից (Դանուբի ափին) տանում եր Վարնա (Սև ծովի ափին)։ Հարավային Բուլղարիայում յերկաթուղիները դնում ելին Կոստանդնուպոլիսից և Եղիշան ծովից (Դեղե-Աղաչ) դեպի Աղրիանուպոլ և այնուհետեւ դեպի Բալկանները, սակայն վերջանում ելին նրանց չհասած, Յամբոլիում (Տունջի ափին) և Բաղարջիկում (Մարիցայի ափին)։ Լավորակ խճուղիները միացնում ելին կարեռադույն քաղաքները և յերեք լեռնանցքներով անցնում ելին Բալկանյան լեռները։

Բուլղարիան հարուստ գյուղատնտեսական յերկիր եր և այդ պյուրացնում եր հարձակվող բանակի պարենավորումը տեղական միջոցներով։ Բուլղարները ոռւսներին դիմավորում ելին ուրախությամբ, վորը շուտով փոխվեց անտարբեր վերաբերմունքի՝ մասամբ ոռւսների անհաջողությունների աղղեցությամբ, բայց ավելի շատ այն պատճառով, վոր զորքերը, թեսլետ և վճարով, մթերք ելին հավաքում բնակչությունից, վորովհետեւ ընկերությունն ու ինտենգանտությունը քիչ ելին բա-

վարաբում նրանց, կամ ամենևին չեյին բավարարում։ Թուրքերը, սովորաբար, յերբ ոռուսները մոտենում եյին, իրենց տները թողնում փախչում եյին։

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՊԼԱՆԵՐԸ

(1-ին և 4-րդ սխեմաներ)

Թուրքական նախատորմը, վոր կիսով չափ բաղկացած եր դրահակիր նավերից, տիրապետում եր Սև ծովում, վորովհետեւ 1853—1856 թվերի Արևելյան պատերազմից հետո ցարական Ռուսաստանին արդելված եր այդտեղ ուղմական նախատորմ ունենալ։ Յեվ, թեպետ 1870 թվին, ողտվելով այն հանդամանքից, վոր յելրողական յերկրների ուշադրությունը բևեռված եր ֆրանս-պրուսական պատերազմի վրա, ցարական դիսլումատիան հայտարարեց, թե Ռուսաստանը չի ճանաչում այդ արդելքը, ուակայն պատերազմն սկսելու ժամանակ ուղմանավեր չեյին կառուցված և ստիպված յեղան առավնյա պաշտպանության համար մի քանի շողենավ զինել թնդանոթներով։

Սև ծովում թուրքական ուղմական նախատորմի տիրապետող դիրքը ոռուսական հրամանատարությանն ստիպում եր իր բանակը ծովափից հեռու պահել և հարվածն ուղղել միջին Բուլղարիայի վրայով, միաժամանակ դրավելով Ռումինիան, վորը հետո ծառայում եր վորպես բանակի թիկունքային ուղոն և պարենամթերք եր հայթայթում։ Սխալմամբ կարծելով, թե թուրքերը 80·000-ից ավելի մարդ Բուլղարիայում հանել չեն կարող՝ ոռուսական պլանը նախատեսում եր արագ ու վրձնական դործողություններ. 160·000 մարդուց բաղկացած բանակով Ռուշուկի և Նիկոպոլի միջև Դանուբի անցնել, արագորեն առաջ շարժվել Բալկանների վրայով և տիրել Կոստանդնուպոլսին. այս եր վերջնական նպատակը յելրողական ուղմաքամումում է թուրքական ամրոցների քառանկյունու դեմ, վորուեղ յենթաղբվում եր, թե պիտի լինեն թուրքերի դիխավոր ուժերը, նկատի յեր առնված առաջակալ դուրս բերել։ Յերկու կորպուս պիտի պաշտպանելին Սև ծովի ավերը։ Կովկասը յերկրորդական ուղմաքեմի դեր եր խողում. ոռուսական հրամանատարությունը հույս ուներ այդ կողմը դրավել։

թուրքերի ուշադրությունը և ուժերը յեվրոպական ռազմարեմից, ըստ վորում կովկասյան ռազմարեմում գործողությունների վերջնական նպատակն եր համարվում թուրքական Երդրում ամրոցին տիրելը, վոր փակում եր ռուսական Կովկասի սահմանները բերող ամենահարմար ճանապարհները:

Թուրքական հրամանատարությունը, հայի առնելով, վոր բավարականաչափ տրանսպորտային միջոցներ չունենալու հետեւ վանքով իր թիկունքային ծառայությունը վատ և լինելու և եր զորքերի տեղաշարժերը թույլ, վորոշել եր պատերազմը վարել պաշտուանողական ձեռվ։ Ամուր հիմնավորվելով ամրոցների քառանկյունու մեջ և արևելքից Զերնովոդի, Կյուստենջի գծի դրամումով այսուեղ իր զորքերը քողարկելով, բանակը պետք է պաշտպաներ Միջին Դանուբը մինչև Խոկեր դետի դետաբերանը, հատուկ ջոկատ ունենալով Վիդջինի մոտ։ Յեթե ռուսները Դանուբն անցնեյին և արշավեյին Բուլղարիայի խորքերը, թուրքական հրամանատարությունը յենթադրում եր զործել ռուսների թերում, խոկ անհաջողության դեսկում՝ հետ քաշվել դեպի Բալկանները, վորտեղ նորից պաշտպանության անցնել։

1877 թի դարնանը, պատերազմի սկզբում թուրքական գվահավոր ուժերը, թվով 120.000 մարդ, դասավորված եյին ամրոցների քառանկյունու մեջ, մոտ 80.000 մարդ ցրված եյին Դոբրուջայում, Սերբիայի սահմանագլխում, Սոֆիայում, Լովչայում և Տրնովում։ Այսպիսով թուրքական զորքերի ընդհանուր թիվը հասնում եր մինչև 200.000 մարդու, չհաշված 20.000 չերքեղներն ու մյուս զորքերը։

Այդ նույն ժամանակ ռուսական բանակը, չորս կորպուս կազմով, վորին միանալու համար Կիևի ղինվորական ոկրուղից դուրս գալիս Եյին Ելի յերեք կորպուս, ընդամենը մոտ 185.000 մարդուց բաղկացած մարտական կազմով հավաքվել եր ռումինական սահմանի առաջ, Պրուտ դետի արևելյան մասին։

ՌՈՒՍԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ԱՆՑՈՒՄԸ ԴԱՆՈՒԲՈՎ

(Ալիքա 1)

Գործողությունների հենց սկզբից ռուսական բանակը պետք է հաղթահարեր Դանուբը, վորը 1 կիլոմետրից ավելի լայնու-

թյամբ և 28—30 մետրի հասնող խորությամբ լուրջ խոչընդուի գեր և խաղացել բոլոր ոռուս-թուրքական պատերազմներում։ Այն ժամանակ, յերբ բանակը 35 որում 350 կիլոմետր անցնելով դարնանային ձյունհալի պայմաններում կենորոնանում եր Բուխարեստի մոտ, ոռուսական հրամանատարությունը նորիստպատրաստում եր Դանուրն անցնելու դործը, վորի ամբողջ աջ ափը գրավված եր ոռուսական հեծելաղորի կողմից։ Թուրքերը Դանուրի վրա ունեցին զրահամսնիորներ ու ոսղմանավեր։ Նրանց դեմ պայքարելու համար ոռուսները Բալթիկ ծովից ականակիր կատերներ ու ծովայիններ փոխադրեցին, անցումի համար ընտրված վայրերը շրջափակեցին ականներով, ավելին ծանր թնդանոթներից բաղկացած մարտկոցներ դրին։ Մարտկոցներն ու կատերները յերկու զրահամսավ վոչնչացրին։ Այս բոլոր միջոցները պարալիղի յենթարկեցին թուրքական նավատորմը։

Դանուրի 1877 թվի խիստ վարարումը շատ դանդաղեցրեց անցումը։ Հունիսի 22-ին միայն, վորովես ցույց, Բրախլովի ու Գալացի մոտ Դանուրն անցավ 14-րդ բանակային կորպուսը, իսկ լույս հունիսի 27-ի գիշերը սումինական Զիմնիցա դյուդի մոտ, բուլղարական Սիստովո քաղաքի դիմաց սկսվեց բանակի դիմավոր ուժերի անցումը։ Վորովես ավանդուրդ դեռն անցնում էր գեն։ Դրաղոմիրովի 14-րդ հետեւակ դիմիզիան (Տ-րդ բանակային կորպուսից)։ Պոնտոններով (կամրջանավերով), տեղացող կրակի տակ դեռն անցնելով՝ ոռուները ջախջախեցին արեվելքից մոտեցող թուրքերին (մոտ 3·500 մարդ) և նրանց քշեցին գետի Նիկոպոլ ու Բուշչուկ։ Հունիսի 27-ի իրիկնակահին բարժաների ու չողենավի ողնությամբ դեռն անցավ 8-րդ կորպուսը։

Տ-րդ բանակային կորպուսի անցումից հետո Ոլոտ դետից Դանուր իջեցրին ժամանակին ողատրաստված կամրջային միջոցներ և հունիսի 30-ին դետի վրա արդեն 1200 մ. լողացող կամուրջ եր դցված։ Միայն 16 որից հետո, Հունիսի 12-ին, Դանուրի հարավային ափին անցան ոռուսական չորս կորպուս։ Թուրքական զորքերի հետ միասին ամրոցների քառանկյունում գտնվող դիմավոր հրամանատար Արդուլֆերիմը, իր կարծիքով բավականաչափ ուժեր չունենալով, հնարավոր չհամարեց, մոր 670 կմ. տարածության վրա, Սև ծովից մինչև սերբական սահմանը, արդելք հանդիսանա ոռուսների անցումին Դա-

Դաւրի վրայով, ուստի և վոչ մի միջոց ձեռք չառավ վոչ ուստի անցումը նախապատրաստելու դեմ և վոչ ել բուն անցումի դեմ :

Ամքող բանակն իր թիկունքի հետ հաղորդակցություն պահպանելու համար մեկ կամուրջը բոլորովին անբավարար եր : Անհամաղ ձեռնարկվեց յերկրորդ լառտակամուրջի կառուցքանը, սակայն աշխատանքը խիստ ծղծղվեց և կամուրջը տառաստ եր միայն ողոստոսի 9-ին : Հետագայում Սիստովոյից գեղի արևելք կառուցվեց յերրորդ կամուրջը ևս :

14-րդ հետեակ դիմիղիայի անցումը և Դանուրի աջ ափին ուղի ունեցած մարտը, վորտեղ վայրը կտրուխծ եր ձորակներով և ծածկված թիւերով ու խաղողի այղիներով, կառարվեցին որինակելի կերպով : Մարտի հաջողությանը շատ նորաստեց մասնավոր հրամանատարների նախաձեռնությունը, վորոնք անցել ենին դեմ . Դրաղոմիրովի գոլբոցը :

Ռուսական բանակի անցումն ինժեներական տեսակետից շատ թերություններ ուներ : Ավանդարդի անցումի համար պոնտոններ քիչ կային . մեկ ույսով փոխադրվում եր՝ ընդամենը 12 վաշտից բաղկացած ուժ, վոր միանդամայն անբավարար եր թուրքական նույնիսկ փոքրիկ ջոկատի հետ հանդիպելու համար : Բարերախտաբար ոռուսները հանդիպեցին միայն պահակակետերին : Շողենավին ու բարժանները հասան միայն հունիսի 27-ի ցերեկը և նրանք արաղացրին 8-րդ կորպուսի անցումը : Մոտ 1 կմ . յերկարությամբ կամուրջ զցելու համար որահանջվեց 4 որ : Այդքան ժամանակամիջոցում թուրքերը կարող եյին իրենց զորքերը մոտեցնել 100 կիլոմետրի վրայից, իսկ թուրքական զիստվոր ուժերը մոտավորապես հենց այդքան հեռավորության վրա ել կազմած Եյին Ռազզլրադի մոտ, իսկ մուշտոկ ամբոցն իր ուժեղ կայազորով ընդամենը 60 կիլոմետրի վրա յեր զտնվում : Թուրքերի հարձակումն 8-րդ կորպուսին կարող եր շատ վտանգավոր դրության մեջ դնել : Բանակի զինվորական ինժեներների այդպիսի անհաջող զործունեցությունը բացառվում և նախ նրանով, վոր նրանք չգիտեյին իրազրությունը, այնուհետեւ չեյին կարողանում կամքջային նյութեր մթերելու համար ողտաղործել Դանուրի վայտանյութերի հարուստ շուկաները, ինչպիսիք Եյին Բրաիլովն ու Գալացը, և վերջապես, կատարնլապես անուշաղիր Եյին դեպի այն պատմական նյու-

թերք, վոր կային Դանուբի վրայով ոռւսների բաղմաթիվ անցումների վերաբերյալ (1771 թվից սկսած մոտ 50 անդամ)։ Զինվորական արխիվներում առանձնապես հարուստ նյութեր կային այն անցումների մասին, վոր տեղի ելին ունեցել ընդամենը 24 տարվա ընթացքում մինչև 1877 թվական, — 1853—1856 թվերի Արևելյան ոլատերազմի ժամանակ։

ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ԴԱՆՈՒԲԻ ԱԶ ԱՓԻՆ

(Սլեմա 1)

Դանուբն անցնելուց հետո շուտով յերեաց, վոր ոռւսական բանակի ուժերն անբավարար են, և վոխանակ Բալկաններից այն կողմն արշավելու, ինչպես մտածում եր ոռւսական հրաժանառությունը, հարկ յեղավ, վոր բանակը նախ իր դրությունն առահովի Դանուբի այն կողմը։ Այդ նպատակով վորոշվեց գրավել Ռուշութիւնը և Նիկոպոլ ամրոցները, 8-րդ բանակային կորպուսն առաջ քաշել, վորուեսդի ղեղի կոստանդնուպոլիս տանող ամենակարճ ճանապարհի վրա լեռնանցքներ դրավի Բալկաններում և այդպիսով ընդարձակել Դանուբի հարավային պրաված շրջանը։ Դրա հետ միաժամանակ դեպի հարավ, Բալկաններից այն կողմն ուղարկվեց հեծելազորային մասնակտությունը, վորուեսդի նա Արևելյան Ռումելիայում բուղարների մեջ ապստամբություն բարձրացնի։

Այս ուղերացիանները կատարելու համար ստեղծվել ելին՝
1) դեն. Գուրկոյի առաջավոր ջոկատը մինչև 12.000 մարդուց քաղկացած ուժով, վորին խնդիր եր տրված շարժվել ղեղի Տրնով, ապա անցնել Բալկանների այն կողմը։ Արան սլիտի հետևեր 8-րդ բանակային կորպուսը, 2) Ռուշուկյան ջոկատը, 12-րդ և 13-րդ բանակային կորպուսները, Ալեքսանդր թաղավորի ավագ վորություն հրամանատարությամբ, վորի սկզբնական նըստատիկն եր դրավել Ռուշութիւնը ամրոցը, ապա միայն թուրքերի ղլիսավոր բանակի դեմ առաջակալ դառնալ արևելյան կողմից, 3) Արևմտյան ջոկատը, 9-րդ բանակային կորպուսը դեն. Կրիպենների հրամանատարությամբ, վորի խնդիրն եր տիրել Նիկոպոլ ամրոցին և դրավել Պլեմնան, նպատակ ունենալով ապահո-

վել ոռւսական բանակի աջ թևը, 4) Ստորին Դանուբի ջոկատը, զեն. Յիմմերմանի 14-րդ բանակային կորպուսը պետք է Դանուբի յերկարությամբ շարժվեր դեպի Զերնովոդի, Կյուստենջե դիմքը, վորպեսդի պաշտպանի ոռւսական բանակի հարաբերությունը Բևարաբիայի ու յերկրի կենտրոնի հետ։ Ռեզերվում մնում էին 11-րդ և Դանուբին մոտեցող 4-րդ բանակային կորպուսները։

Այն լուրը, թե ոռւսները Դանուբի անցել են, թուրքական կառավարությանն ստիոլեց շտամ կարգով պատերազմի դլամակը ուղմարեմն ուղարկել բոլոր զորքերը, վորոնք դեռ ցրված ելին դանաղան շրջաններում։ Սուլեյման-փաշայի 33·000 մարդուց բազկացած բանակը, վոր դործում եր Զերնովորիայի դեմ, Անտիվարիայից (Աղբիատիկ ծովի ափին) ծովով, Հունաստանի շուրջը պատելով, փոխադրվեց Դեղե-Աղաչ (Եղեյսն ծովի ափին) և կոստանդնուպոլիս, ապա յերկաթուղիներով փոխադրվեց Աղբիանոսով, վորտեղից նու պետք է դուրս գար Բալեանները՝ հարավային Բուլղարիան պաշտպանելու համար։ Զորքերի տեղափոխությունը շատ դանդաղ եր ընթանում և ավարտվեց միայն հուլիսի յերկրորդ կեսին։ Ռսման-փաշան, վոր 30·000 մարդով կանգնած եր Վիզդինի մոտ, Սերբիայի դիմաց, հրաման ստացավ շտամ դուրս գալ դեպի Պլեվնա, վոր կարևոր հանգույց եր լինչպես Դանուբից դեպի Բալկանները, այնպես ել դեպի արևելք—ոռւսների թևը տանող ճանապարհների վրա։ Բացի այդ, ուրիշ շրջաններից ել զորքեր ուղարկվեցին Բուլղարիա, ընդամենը մոտ 80·000 մարդ։ Թուրքական նավատորմի ախրապետող դիրքը Առ ծովում թուրքերին հնարավորություն եր տալիս ողտագործելու ծովային հարմար ճանապարհը։

Առաջավոր ջոկատը (10 ½ դումարտակ, 31 ½ Եսկադրոն և 32 հրանոթ) ուղղվեց դեպի Բալկանները։ Արագ հարձակումով դրավվեց Տրնովոն՝ Բուլղարիայի հին մայրաքաղաքը, վորտեղ ջոկատը մնաց յերեք որ՝ Լոռների վրայով անցումը նախապատրաստելու համար։ տեղեկություններ ելին հավաքում լեռնանցքների ու թուրքերի դասավորության մասին, կազմակերպեցին բեռնատար տրանսպորտ և հավաքեցին պարենի պաշար։ Այդ ժամանակամիջոցում հեծելազորին հասավ 8-րդ բանակային կորպուսի ավանդարդը։ Տեղական բնակիչներից իմացան, վոր թուրքերը թույլ ուժերով բանել ելին միայն Շիպկայի լեռնանցքը (1300 մ.), վորտեղով անցնում եր խճուղին։

Իրականում Ռեռուֆ-Փաշան, վոր 20.000 մարդով 100 կիլո-
մետր տարածությամբ պաշտպանում եր Բոլիանների շրջանը -
ցըել եր ուժերը. Շիոլկայում կար մոտ 7000 մարդ, մյուս
լեռնանցքները պահպանվում եին մեկակոն-յերկուական դու-
մարտակներով, 10.000 մարդոց բաղկացած ռեզերվը կանգնած
եր Սլիվնոյում:

Գուրկոն վորոշեց լեռներն անցնել բնակչությունը ա-
նուշաղ ըության մատնված Խախնկիոյի լեռնանցքով (Շիոլկայից
Լեռներով 60 կմ. դեպի արևելք) և Տունջա դետի հովտով՝ դուրս
դալ Շիոլկայի թիկունքը: Միաժամանակ հյուսիսից լեռնանցքի
վրա պիտի զրոհեր Տ-րդ կորսուսի ավանդարդը: Միացյալ զր-
բոհը նշանակված էր հուլիսի 17-ին:

Հեծյալ սառյորներին առաջ ուղարկելով՝ Գուրկոն հույ-
սի 12-ին դուրս յեկալ Տրնովից, քեռնակիր անասունների վրա
բարձած ունենալով 5 որվա պաքոխմատ և 3 որվա անասնակեր:
60 կմ. տարածությունն ու լեռնանցքն անցան 2 որում: Հուլի-
սի 14-ին առաջակոր զորամասերը կիրճից դուրս յեկան և Ճշե-
ցին թուրքական ջոկատը, վորն արագորեն նահանջեց դեղի հո-
րավ: Ամբողջ զորաոյունն առաջ քաշելով՝ Գուրկոն 16-ին մո-
տեցավ Շիոլկային, սակայն թուրքերի հետ ունեցած ընդհա-
րումների հետեւանքով ուշացավ և Բալկանների ստորոտին մո-
տեցավ միայն հուլիսի 17-ի յերեկոյան: Հյուսիսից յեկող ու-
սական զորքերը լեռնանցքի վրա դրույցին ցերեկով և հետ մըդ-
վեցին: Հուլիսի 18-ին Գուրկոն հետեւակով լեռնանցքի վրա զր-
բոհեց հարավից և նու ևս հաջողություն շահեցավ: Թուրքերը
տեսնելով, վոր իրենք շրջապատված են, հուլիսի 19-ին, հրե-
տանին ձդելով, լեռներով նահանջեցին դեղի արեմուոք և հա-
զիվ կենտրոնացան Ֆիլիպպովովի մոտ: Նույն որը ուստի ըստ
Տ-րդ բանակային կորսուսի բրիգադով զրավեցին լեռնանցքը:

Առուշուկյան ջոկատը ծավալվեց Յանտրա և Կարս-լում դե-
տերի միջև, իր վրա թեեռելով ուշադրությունը և կաշկանդե-
լով սակագ յեռանդուն Արդուլ-Քերիմի ուժերը:

Թուրքական հին ամբոց Նիկոպոլը, վորի ղեմ ուղարկված եր
պես. Կրիդեների Արևմտյան ջոկատը, այն ժամանակից հասկա-
ցողությամբ խիստ ամրացված եր: Զնայած դրան, յեռանդուն
զրոհից հետո, հուլիսի 15-ին ուստի ըստ զրավեցին առաջակոր
ամրությունները, իսկ հետեւյալ որը թուրքերը, թիվով մոտ

7.000 մարդ 103 թնդանոթով ու 6 դրոշակալով, անձնատուր յետան : Գեն . Կրիդեները , վոր զրադված եր ամրոցն ու զրաված հարուստ պաշարները կարդի բերելով , չեր շտապում Պլեվնան դրավել , և միայն 2 որից հետո , հուլիսի 18-ին , յերբ լուրեր հասան , թե թուրքերը Վիզենից տուած են շարժվում , նա ուղարկեց յերեք հետեւակ դունդ՝ յերկու ջոկատներով : Սակայն ոռւսներն ուշացել եյին : Թուրքերին հաջողվեց հուլիսի 19-ին Պլեվնան դրավել և նախապատրաստվել ոռւսներին դիմագրելու : Հուլիսի 20-ին ոռւսներն անսպասելիորեն ընդհարվեցին Ռոմանիաշայի զորքերի հետ (17.000 մարդ և 51 թնդանոթ) և չնայած համառ դրոհներին , մեծ կորուստներով հետ մղվեցին և մեկ չվերթաշափ քաշվեցին Պլեվնայից դեպի արևելք : Անհաջողության դիմավոր պատճառներն եյին՝ առանց հետախուզության տուած շարժվելը , ճակատ առ ճակատ թուրքական խրամատների վրա զրոհելը և յերկու ջոկատների անջատ-անջատ դործողությունները :

Ռոման-իաշայի թուրքական զորքերի անակնկալ յերեան դալը Պլեվնայում , վոր ընդամենը յերկու չվերթաշափ եր հետու Սխտովյոյի ոռւսական միակ անցից , խիստ անհանգուց ոռւսական դիմավոր հրամանատարությանը : Բալկանների այն կողմն անցած զորքերի համար վտանդ եր առաջացել , ուստի վորոշվեց Պլեվնան դրավել և ջախջախել այնտեղ նստած Ռոման-իաշային , վորի ուժերը , ինչպես հաճախ անհոգության դեպքում լինում ե , խիստ շափականցված եր պատկերացվում :

9-րդ բանակային կորուստն ուժեղացնելու համար ուղարկվեցին 4-րդ և 11-րդ բանակային կորուսների հենց նոր Դանուբին անցած մեկ ու կես դիվիզիաները : Վորոշված եր մոտ 20.000 մարդուց բազկացած այդ ուժերով հուլիսի 30-ին յերկրորդ անդամ զրոհել Պլեվնայի վրա և դրավել այն : Զնայած մի շարք տակտիկական հաջողություններին , վորոնց ժամանակ ոռւսական զորքերը բռնն զրոհով հասան քաղաքի արվարձաններին , թուրքական ամրությունների վրա կատարած զրոհը նորից հաջողության չհասցրեց , վորովհետեւ զրոհը տեղի յեր ունենում անջատ-անջատ ավելի քան 10 կմ . Յակատով , առանց իոխաղարձ ողնության և հրածվությամբ նախապատրաստելու , և ոռւսներն ստիպված յեղան անկարգ կերպով յետ քաշվել դե-

ոլի իրենց նախկին դիրքը։ Զոկատի թիկունքում խուճառ տարածվեց, վոր հասավ մինչև Սիստովո, վորտեղ հարկ յեղափամուրջը պահպանել դինքած ուժով։ Ռուսների կորուստը հասավ 7000 մարդու, իսկ թուրքերը կորցրին 3.800 մարդ։

Ոսման-փաշան, չիմանալով Պլեվնայի մոտ ռուսական զորքերի քայլայման աստիճանը և յերկյուղ կրելով կրկնակի դըքոհներից, չմտածեց իր հաջողություններն ողտադործելու մասին, այլ սկսեց դրադիել հյուսիսից ու արևելքից Պլեվնան շըրջառատող բարձրություններն ամրացնելով ու ընդարձակելով, և զրավեց միայն Լովչան, վոր Պլեվնայից 20 կիլոմետր դեպի հարավ և գտնվում, վորպեսզի ապահովի իր հաղորդակցությունը Սոֆիայի հետ։

Ռուսների դժվարին դրությունն եւ ավելի բարդացավ նըրանով, վոր Գուրկոյի ջոկատի դեմ, վորը հուլիսի վերջին վոքր Բալկանների այն կողմում մոտեցել եր Եսկի Զաղրային, կենտրոնացավ Սուլեյման-փաշայի բանակը, վորի գլխավոր ուժերը գտնվում եյին Կարա-բունարի մոտ։ Բալկանյան գլխավոր լեռնաշղթայից նահանջած զորքերի հետ միասին նրա մոտ հավաքվեց մինչև 45.000 մարդ։ Յերկու կողմերն իրարից $11\frac{1}{2}$ -2 որվա ճանապարհի վրա եյին գտնվում, սակայն իրենք եւ այդ շղիտեյին, վորովհետեւ հետախուզությունը վար եր կազմակերպում։

Պլեվնայի յերկրորդ դրուի նախորյակին, հուլիսի 29-ին, Գուրկոն ջախջախեց Սուլեյմանի բանակի աջ թեր Յենի Զաղրայի մոտ, բայց հուլիսի 30-ին ռուսական աջ թեր, վոր բարեկացած եր բուլղարական ուշխարհազորի յերիտասարդ դրուժենաներից, Եսկի Զաղրայի մոտ զրոհի յենթարկվեց Սուլեյմանի գլխավոր ուժերի կողմից, անհաջողություն կրեց և քաշվեց դեպի կազանլը։ Համոզվելով, վոր թուրքերի ուժերը դերադանցում են, Գուրկոն Խայինկիոյի լեռնանցքով յետ քաշվեց Բալկանների մյուս կողմը, հետեւակով սրահպաննելով Շիպկայի լեռնանցքը։ Սուլեյմանը, ռուսներին շատ ուժեղ համարելով, չհետապնդեց նրանց։ Այդպիսով, թեպետ և Գուրկոյի արագ անցումը Բալկաններով Ալբիանովով դրավման չհասցրեց, այն յելակետ դարձնելու համար դեպի Կոստանդնուպոլիս կատարելիք հետագա հարձակման համար, բայց և այնպես Բալկանների ամենահարմաք Շիպկայի լեռնանցքը մնաց ռաւսների ձեռքում։

ԹՈՒՄՆԵՐՆ ԱՆՑՆՈՒՄ ԵՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ

ՅԵՎ ԹՈՒՐՔԵՐԸ ՓՈՐՁՈՒՄ ԵՆ ՀԱՐՉԱԿՄԱՆ ԱՆՑՆԵԼ

(Սխեմա 1)

ՊԵՂՆԱՅԻ անհաջողությունները հիասթավեցրին ռուսական հրամանատարությանը, վորը հույս ուներ գյուրին հաղթանակի հասնել թուրքերի նկատմամբ : 145·000 ռուսական վորքերը վիսաղեղնաձև ցրված եյին 330 կիլոմետրի վրա : Բոլոր ուժերը տեղավորված եյին վորովես առաջակալներ և թուրքերին դիմադրում եյին արևմուտքից, հարավից ու արևելքից, իսկ հարձակման համար գլխավոր ուժեր, կամ ակտիվ պաշտպանության համար ոեղերվ չեր մնացել : Թուրքական ուժերը խիստ չափազանցվում եյին : Բայ ռուսների ստացած տեղեկությունների՝ արևմուտքում Ոսման-փաշան ուներ մոտ 80·000 մարդ (իրականում 25·000 մարդ) ընդդեմ 35·000 մարդուց բաղկացած Արևմտյան ջոկատի : Հարավում Սուլեյման-փաշան վորովես թե ուներ 50·000 մարդ (իրականում 35·000 մարդ) ընդդեմ 150 կիլոմետրի վրա ձղված դեն . Ռազեցկու դորքերի, վոր Բալկանները գրավել եր 45·000 մարդուց բաղկացած ուժերով (Գուրկոյի ջոկատը լուծված եր) : Վերջապես Արդուլ-Քերիմի դեմ, վորն ըստ տեղեկությունների մինչև 85·000 մարդ ուներ (այդ մոտ եր իրականությանը), գտնվում եր 45·000 մարդուց բաղկացած Ռուշուկյան ջոկատը, վոր դասավորված եր 60 կմ . յերկարությամբ ճակատով : Դեպի Դանուբ շարժվում եր մոտ 20·000 մարդ : Ռուսական հրամանատարության կարծիքով վտանգ եր սպառնում բոլոր կողմերից և մանավանդ Ոսման-փաշայի կողմից, վորը ՊԵՂՆԱՅԻ մոտ արդեն յերկու անդամ հաջողություն եր ունեցել :

Նկատի առնելով այս դրությունը՝ վորությունը՝ հարձակումից հրաժարվել և անցնել պաշտպանության, մինչև վոր նոր ուժեր կդան, առաջին հերթին ներդրավել ռումիններին, վորոնք կարդ եյին Դանուբն անցկացնել յերեք դիվիզիա, ապա զորահամար կատարել Ռուսաստանում և Դանուբի այն կողմն ուղարկել ելի յոթ դիվիզիա, այդ թվում դվարդիա ու գրենադերներ, վոր ռուսական զորքերը կուժեղացներ 110·000 մարդով : Մինչեւ այդ ոժանդակ ուժերի հասնելը, զեն . Ռազեցկուն հրա-

մայված եր պահպանել Սիլիլի, Շիոլկա, Յելենա գիծը, Բուշ-
չուկյան ջոկատը պետք ե պաշտպանվեր լոմ դետի ափին, Ա-
րևմտյան ջոկատը պետք ե ամբանար Պէլիլսայից 20 կմ. դեռի
արևելք Պելիշատի մոտի դիրքերում:

Աղոստոսի սկզբին թուրքերի դրությունը նպաստավոր եր:
Հակառակորդի նկատմամբ տիրապետող դիրք դրավելով թուր-
քերը կարող ելին ցանկացած տեղը դերադանց ուժեր կլնաքո-
նացնել և ոռոսական ռազմաճակատը ձեղքել: Թուրքական կա-
ռավարությունը նոր դիխամոր Հրամանատար նշանակեց Մէհ-
մեդ-Ալիին (մահմեդականություն ընկունած դերմանացի) և
պահանջեց, վոր նա հարձակման անցնի: Սակայն այդ թուրքե-
րին չհաջողվեց, վորովհետեւ Սուլեյմանի և Մէհմեդ-Ալիի միջե-
թշնամական հարաբերություն դոյցություն ուներ և ոռոսների
ուժերը չափաղանցրած ելին պատկերացնում: Թուրքական փա-
չաներն ոժանդակ ուժեր ելին պահանջում և համաձայնում ե-
լին հարձակման անցնել միայն այն ժամանակ, յերբ հարեանն
առաջ կշարժվի: Վերջապես, Սուլեյմանը Հրաման ստացավ—
ուղղակի սուլթանից— ոռոսների ճանապարհը դեպի Կոստանդ-
նուպոլիս ամուր փակելու համար դրավել Շիոլկայի լեռնանցքը:
Աղոստոսի 21—22-ին թուրքերը ճակատ առ ճակատ դրոհեցին
ո. Նիկոլայի լեռան վրա, վոր Շիոլկայի լեռնանցքի դիխամոր
կետն եր և պաշտպանվում եր ոռոսական ինն դումարտակների
կողմից, վորոնք ունեցին 20 թնդանոթ: Վրա հասավ դէն. Ռա-
դեցկու 7 դումարտակից բաղկացած սեղերի, վորի ողնու-
թյամբ ոռոսները հետ մղեցին բոլոր դրոհները: Թուրքերը հար-
ձակումից Հրամարվեցին և տեղափորվեցին լեռնանցքը շրջապա-
տող բարձունքներում: Այդ դրությամբ ել յերկու կողմերը մը-
նացին մինչև 1878 թվի սկզբը:

Մէհմեդ-Ալին սպասում եր վոր Սուլեյմանը, Շիոլկան դր-
բավելով, միանա իրեն, և նրա վրոհների սնհաջողություններից
հետո միայն, ողոստոսի վերջին, անվճուական հարձակում սկր-
ուեց Ռուշուկյան ջոկատի դեմ, իր առաջ դնելով սահմանափակ
մի ինդիր—ոռոսներին հետ մղել կարա-լոմ դետից:

Ռուշուկյան ջոկատը, վորի քանակն ավելացված եր մինչեւ
60.000 մարդ, տեղափորված եր այդ ժամանակ Դանուբից մին-
չե Բալկանների ստորոտները, քողարկելով դեպի Սիստավ և
դեպի Տրնով՝ Շիոլկայի թիկունքը տանող ուղղությունները,

Կարա-Լոմ զետի դժի վրայի առաջավոր զորամասերով։ Աղոստոսի 30-ին թուրքերը կարողացան վորքը ինչ նեղել ոռոսական առաջավոր ջոկատներին, սակայն յեռանդուն հարձակման վախարեն Մեհմեդ-Ալին մի քանի որից հետո միայն շարժվեց Բելա Քաղաքի վրա։ Մինչ այդ Ռուչչուկյան ջոկատի մեծ մասը կենտրոնացավ այդ քաղաքից արևելք՝ դանիւն ամրացված ու իրքերում։ Խետ մեծացնելով ոռոսների ուժերը, Մեհմեդ-Ալին վճռականություն չունեցավ հարձակվելու ոռոսների վրա և վերաբարձավ ամրոցների հետեւ դիմը, վորտեղ նազղրադի մոտ ևս սուղծել եր ուժեղ ամրացված ճամբար։ Ռուսները նորից առաջ յեկան զետի Կարա-Լոմ զետը։

Թուրքական բանակների հրամանատարների անդործունեցությունը վերջի ի վերջո թուրքական կառավարության ստիպեց յուրաքանչյուր բանակին առանձին ցուցումներ տալ, ըստ վերում, զինվորական մինիստրը, առանց պատասխանառվությունն իր վրա վերցնելու, իր խիղձը հանդստացնելու համար, Ռուսանին և Մեհմեդին հեռագիր տվեց, վոր նրանք համաձայնության դան Սուլեյմանի հետ։

Այդ ցուցումների հետևանքով Ռուսան-իաշտն ողոստոսի ձեւին վորձ արեց դուրս դալ Պլեվնայից, հրետանացին հրաձրություն ունեցավ ոռոսական Արևմտյան ջոկատի հետ, վոր վրային եր Պելիշատի մոտի ամրացված դիրքերը, ապա կրկին վերաբարձավ իր ամրությունները։ Ռուսների դեմ առանձին զործողություններ վարելու համար իրեն թույլ համարելով՝ Ռուսան-իաշտն հետալայում հրաժարվեց հարձակման վորեւ փորձից։ Ռուսներն ել, պասիվ մնալով իրենց դիրքում, փախցրին լայ դաշտում թուրքերի վրա հարձակվելու առիթը, չորս տաղործեցին իրենց ուժերի վերապանցությունն ու մարտական լավագույն ոլատրաստությունը, վորոնք կազմակեցին նրանց հաջողությունը թուրքերի դեմ։

ՊԼԵՎՆԱՅԻ ՅԵՐՐՈՐԴ ԳՐԱՀԱՅ

(Ախեմա 2)

Հարձակման անցնելու թուրքական բոլոր փորձերը հաջողությամբ ջախջախելու և առաջին սժանդակ ուժերի, այդ թվում նաև ոռոմինական յերեք դիվիզիաների ժամանման տօլա-

վորության տակ ռուսական հրամանատարությունը վորոշեց հարձակման անցնել, առանց սպասելու գվարդիայի և զրենարքերների ժամանմանը։ Թուրքերի անդործունեյությունը նողատեղ այդ մտադրության իրականացմանը։

Նախ և առաջ ռուսական հրամանատարությունը վորոշեց բոլոր հնարավոր ուժերը չարժել դեսլի Պլեվնա և հնարավորին չափ շուտ զրավել այն։ Վորոշված եր նախ զրավել Լովչան, վորակեսղի ասղահովիլի Պլեվնայի վրա զրոհելը հարավից։ Սեպտեմբերի 3-ին 22·000 մարդուց և 98 թնդանոթից բաղկացած ռուսական մի ջոկատ, վորին վաստորեն զեկավարում եր դեն։ Սկսելով, մանրազնին հետախուզությունից ու հրետանային նախապատրաստությունից հետո, զրավեց Լովչան, վորը պաշտպանում ելին 6000 թուրքեր, և 2 որից հետո մտեցավ Պլեվնային։

Ոսման-փաշայի դեմ, վորն այդ ժամանակ Պլեվնայում ուներ մինչև 36·000 մարդ՝ 70 թնդանոթով և ամրացված ճամբար եր ստեղծել՝ ճակատ կազմելով դեսլի հարավ, արևելք ու հյուսիս, ռուսական հրամանատարությունը կենտրոնացրեց 96·000 մարդ՝ 440 թնդանոթով, վորոնցից 20-ը՝ պաշարողական։

Թուրքական ամրությունների դիմավոր ուժը խրամատների ցանցն եր՝ ուժեղ ուղղութների նման հենակետերով և առջեռում քնկած վալրի խաչածե պաշտպանությունը, շնորհիվ տեղանքին հաջողությամբ հարմարվելուն։ Ռուս հրամանատարները Պլեվնան համարում ելին յուրահատուկ մի ամրոց և կազմել ելին դործողությունների հետեւյալ սլլանը։ Դիշերը յերեք կողմերից մոտենալ թուրքական ամրություններին, հրազդարակ հանել ամբողջ հրետանին, ոմբակոծությամբ մի քանի որվա ընթացքում ավերել այդ ամրությունները և ապա զրոհել նրանց վրա։

Սեպտեմբերի 8-ին Պլեվնայի մոտ սկսվեց զրոհի հրետանային նախապատրաստությունը։ Գրոհի սլլանը մշակվում եր ոմբակոծության ժամանակ։ Դրա հետեւանքով հրետանին ավելի շատ կրակում եր այն ուղղութների վրա, վորոնք հարձակման ժամանակ զրոհի չենթարկվեցին։

Գործողությունների սկզբում Պլեվնայի մոտ ժամանեցին թագավորը և դիմավոր հրամանատարը՝ իրենց շտաբներով։ Արևելյան ջոկատի հրամանատարն անվանապես ռումինական իշ-

խան կարլոսն եր, բայց իրականում նա ոռւմինական ողբքերի հրամանատարն եր, իսկ ոռւսական զորքերինը դեն. Զոտովն եր: Սակայն բոլոր դործերին խառնվում և զլիավոր հարցերը վճռում եր զլիավոր հրամանատարի շտաբը, ըստ վորում հատուկ յեռանդ եր ցուցաբերում շտաբի պետի ողնական դեն. Լելիցկին:

Դեն. Զոտովը յենթաղբում եր զլիավոր հարվածն ուղղել Տուչենիցա զետակից դեռի արևմուտք և ոմբակոծության ժամանակ այդ ուղղությամբ զորքերն ուժեղացրեց հետեակ բրիդադայով, ինչպես և Տուչենիցա զետակին մոտեցրեց պաշարողական թնդանոթների մարտկոցները և իր սեղերվը: Բայց այսուեղ միջամտեց դեն. Լելիցկին: Սեպտեմբերի 10-ին նա թուրքի կերպով յեղավ Լովչինյան խճուղու վրա և յեկավ այն յեղբակացության, վոր այդ խճուղու յերկարությամբ գրոհը թուրքերի համար շատ վտանգավոր կլինի և նրանք այդ խճուղին համառորեն կալաշտալանեն, ուստի զլիավոր գրոհը պետք է մըղել թուրքերի ճակատում, Ոմար-բեյ-տարիի ուղղուտի վրա: Չնայած դեն. Զոտովի բողոքներին՝ հենց այս միտքն ել գրոհի պլանի հիմքը կազմեց:

Պլան եր կազմված Պլեվնայի վրա գրոհել յերեք ուղղություններով, թուրքական ամրությունների ամենաուժեղ մասերի վրա, այն եւ ամրացված ճամբարի արևելյան ու հարավային ճակատների վրա: Աջ թերում, Գրիվիցա զետակից դեռի հյուսիս, Գրիվիցյան ուղղուտի վրա հարձակվելու ուղարկվեց 48 դումարտակ (42 ոռւմինական և 6 ոռւսական), կենտրոնում, Գրիվիցա և Տուչենիցա զետերի միջև, Ոմար-բեյ-տարիի ուղղուտի վրա հարձակվելու ուղարկվեց 12 դումարտակ, նրա յետելիանգնած եյին 9 դումարտակ վորակես ուղերվ, վոր գրոհի սկզբին ուժեղացվեց ելի 3 դումարտակով: Զախ թերում Տուչենիցա զետակից դեռի արևմուտք յեղած ուղղուտի վրա հարձակվելու նշանակվեց 22 դումարտակ: Բացի այդ, 12 դումարտակ կենտրոնում քողարկում եյին հրետանին, և 60 եսկադրոն հեծելազոր ուղարկվեց Պլեվնայից դեռի արևմուտք ու հարավարևմուտք, վորակեսդի հարձակվեն թուրքերի թիկունքների վըրա, Պլեվնայից դեռի Սոֆիա տանող մատակարարման ուղիների վրա:

Թուրքերի համար գրոհի ամենավտանգավոր ուղղությունը

Տուչենիցա զետակից դեսի արևմուտք ընկած ուղղությունն
էր, Լովչացից անցնող խճուղու ուղղությամբ, վորովհետեւ այդ
ողին տանում եր դեսի Պէտքա քաղաքը, վորտեղ դանվում
Ելին կտուավարման կենտրոնն ու թուրքերի պահեստները և դը-
րա մատովն եր անցնում դեսի Սոֆիա նահանջելու ճանապար-
հը: Այն ինչ այդ ուղղությամբ դրոհելու համար նշանակվել
էր ամբողջ ջոկատի ուժերի միայն մոտ $\frac{1}{5}$ մասը:

Պէտքայի ամբություններում թուրքական ուժերն սկզբում
դասավորված Ելին այսպէս. Գրիվիցա զետակից դեսի Հյուսիս
10 դումարտակ՝ 15 թնդանոթով, Գրիվիցու և Տուչենիցա զե-
տակիների միջև զործում Ելին՝ 21 դումարտակ՝ 36 թնդանո-
թով և Տուչենիցայից դեսի արևմուտք՝ 8 դումարտակ՝ 9
թնդանոթով, 6 դումարտակ՝ Հեծելաղորով և 12 թնդանոթով,
վորտես ընդհանուր ուղղերի կանոնած Ելին Պէտքա քաղաքի
մոտ:

Հրետանային նախապատրաստության ժամանակ գեն. Սկո-
րելեւ, վոր Տուչենիցա զետակից դեսի արևմուտք զործով ջո-
կատի առաջավոր մասերի հրամանատարն եր, կոխիներով առաջ
շարժվեց, վորովեսպի զրոհի համար յելմոն դիրք զրավի, սա-
կայն մյուս ճակատամասերում ուսւների անդոքծունելության
ոլատճառով թուրքերի ուշադրությունն այս կողմը կենտրոնա-
ցավ, նրանք այստեղ իրենց ուժերն ավելացրին՝ հասցնելով
մինչև 19 դումարտակի և այլպիսով ոլաշտանվողների ուժերը
Հայուարեցրին հարձակվողներին: Թուսական հեծելաղորի զոր-
ծունելությունն ել արտահայտվեց նրանով. վոր հեծելաղորն
իր հետախուզներով միայն դիտողության տակ եր առել Պէտք-
նայից դեսի Սոֆիա տանող ճանապարհը և վոչ մի աղղեցու-
թյուն չեր ունենում թուրքերի հաղորդակցության վրա, վո-
րոնք նույնիսկ Հրետանային ոմբակոծության ժամանակ շարու-
նակում Ելին համալրում և պաշարելեն ստանալ Սոֆիայից:

Հրետանային նախապատրաստությունը շարդարացրեց իր
վրա զրված հույսը: Թուսական Հրետանին ֆուղասային ոում-
բեր չուներ, ուստի նրա ներդործությունը հողաշեն ամրու-
թյունների վրա շատ աննշան եր, բացի արև, այն տարածու-
թյունը, վորից կրակում Ելին, շատ թնդանոթների համար
խիստ մեծ եր: Գործելով անջատ, առանց հետեակի հետ կտոր
ունենալու և առանց վորեե պլանի՝ ոուսական Հրետանին միայն

անողութ ոռոմքեր եր ծախսում : Հրետանային կրակի ժոմանակ թուրքերն իրենց զորքերը դուրս ելին բերում ամրություններից էտք թե նստած եյին մնում բլինդաժներում , իսկ ոռոսական հրետանին այնքան թույլ եր , վոր չեր կարող ավերել նրանց ոիրքերը : Առուստկան հրետանու անզորությունը բարձրացրեց թուրքերի մարտական տրամադրությունը և հավատն իրենց ուժերի նկատմամբ : Դիրքերում ու բլինդաժներում առաջացած աննշան վնասվածքները դիշերված ընթացքում թուրքերը հեշտությամբ ուղղում ենին :

Մոտակա զրոհին սպասելով՝ թուրքերն զղալիորեն ուժեղացրին իրենց ամրությունները , բազմաթիվ նոր խրամատներ փորեցին և սեսյունների 11-ին թուրքերի ամրացված ճամրարի արևելյան ճակատն արդեն ավելի ուժեղ եր , քան ոմբակոծությունից առաջ եր : Պաշարողական հրետանու պետք ոմբակոծման առաջին որիտ յերեկոյան առաջարկում եր զրոհել թուրքերի վրա , պնդելով , թե հրետանին ավելի բան անել չի կարող , քան արել և առաջին որը , ոակայն նրա առաջարկությունը չընդունիլու :

Չորս որվակ ոմբակոծությունից հետո պարզվեց , վոր ոռոմքերը պակասում են և շատ թնդանոթներ անսկեռքացել են , ուստի ոռոսական հրամանատարությումը սեսյունների 11-ին բնորդանուր հարձակութ նշանակեց : Նախորդ որն սկսված անձրեն ու մառախուղը շարունակվեց հարձակման ամրողջ որվակնեցքում՝ արդելելով հետեւ կրակին ու հարձակման բնթացքին : Լուսաբացից ոկտած կրօնի բաց անելով՝ հրետանին պետք է կրակ տեղար յերկու ընդմիջումով , վորից հետո ժամը 15-ին պետք է սկսվեր ընդհանուր հարձակումը :

Աջ թեում ոռոմինները ոռոսների ովնությամբ զրավեցին Գրիվիցայի ոկտուտը և միայն այդ ժամանակ սկարզվեց , վոր նրա կողքին մի ուրիշ ոկտուտ ել կա , վորը գրավել չհաջողվեց : Կենտրոնում յերկու գունդ թյուրիմացությամբ նշան կամ ժամկետից շուտ զրոհեցին Ռմար-Շելտարիի ոկտուտի վրա և հետ մղվեցին մեծ կորուստներով : Նրանցից հետո յերեք հերթով զրոհեցին ելի չորս դունդ : Բայց նրանք բոլորն ել հետ մղվեցին թուրքերի հրացանային ուժեղ կրակով , վոր տեղում եյին ճակատից ու թերերից , հարեւան խրամատներից ու ոեղուտներից : Կենտրոնում ոռոսների ընդհանուր կորուստը հասնում էր 4.300 մարդու :

Գրոհը վիովին հաջող ծավալվեց Տուչենիցայի արևմտյան ափին, վորտեղ զեկավարում եր դեն. Սկսելու: Իր ջոկատը դասավորելով մի քանի եշելոններով և հրետանին հաջող տեղադրելով՝ գեն. Սկսելու, վոր կովի ընթացքը դիտում եր կանաչ լեռների յերրորդ դաշտից, ժամանակին իր ռեզերվով ոժանդակեց հարձակվող զորամասերին և, ի վերջո, անձամբ ձե հեծած յերեալով առաջավոր գծում՝ զորքերը դրոհի տարավ նշված ռեղուտներից մեկի վրա, վորից հետո դրավվեց նաև ժյուռ. ռեղուտը: Ռուսական զորքերն արդեն բուն Պլեվնայից 300—400 մ. հեռավորության վրա ելին:

Այսպիսով թուրքերի համար ամենավտանդավոր ռեղությամբ ռուսները խոշոր հաջողություն ունեցան: Մնում եր մի այն այդ հաջողությունը ծավալել: Ռուսական հրամանատարության տրամադրության տակ կար 30 դումարտակ, վորոնք դեռ կոխիներում չելին յեղել, չհաշված ռումինական 28 դումար տակները:

Յեթե դրոհի ոլլանը կազմելիս Լեիցկու նկատառումները՝ զլիավոր հարձակումն ուղղել կենտրոնի վրա— վորոշ չափով համոզիչ ելին, ապա սեպտեմբերի 11-ի յերեկոյան, յերբ Սկսելու ձախ թևում ճեղքեց թուրքերի սլաշտպանության, դիմք նրանց համար ամենավտանդավոր ռեղությամբ, դրանով իսկ այդ ռեղությունը զլիավորը դարձավ ամբողջ Արևմտյան ջոկատի համար և հաջողությունը զարդացնելու համար հարկավոր եր այդ կողմը կոխադրել յեղած բոլոր ռեզերվները:

Սակայն բազմադլուխ հրամանատարությունը, վոր իր շտարով տեղավորված եր կենտրոնից գենը, այդ ճակատամասում միայն անհաջող հարձակումներն եր անսում և չկարողացավ ավելի լայն տեսակետ կազմել, դնահատել իրերի դրությունը հարձակման ամբողջ ճակատում: Գլխավոր հրամանատարության ընդհանուր յեղբակացությունն այն եր, թե Պլեվնայի դըրուն անհաջող անցավ, կարելի յե յերկյուղ կրել, վոր թուրքերը հարձակման կանցնեն, ուստի դրա համար պետք է ռեզերվները կենտրոնի հետեւ պահել: Այդ յերկյուղը միշտ կար զլիավոր հրամանատարի շտաբում և առանձնապես ռեժեղացավ ողոստոսի 31-ից հետո, յերբ Ռումանիացան հարձակվեց Պելշատի վրա:

Հետեւյալ որը մարտական դործողությունները շաբաթակ-

վում եյին միայն Տուչենիցա վետակից դեռի արևմուտք ընկած ճակատամասում։ Ոսման-իւաշան, լիովին հասկանալով, թէ ինչպիսի վտանգ է հանդիսանում ուղղուտների առումն Սկորենի կողմից, դերազանց ուժեր համարեց նրա դեմ և ուղղումբերի 12-ի առավոտվանից սկսվեց թուրքերի հակահարձակումն ավելի ու ավելի մեծ ուժերով։ Յերեկոյան դեմ Ոսման-իւաշան իր 49 դումարտակներից հյուսիսային ու արեելյան ճակատներում թողեց ընդամենը 12 դումարտակ և դեռի Պլեվնա շարժեց 37 դումարտակ, դրանցից մոտ 25 դումարտակ ժամը 17-ին հինգերորդ հարձակման ուղարկեց, պատրաստվելով անհաջողության դեպքում Պլեվնան թողնել և հետ քաշվել դեպի Սոֆիա տանող խճուղով։ Սկորենի բուռն խնդրանքները՝ ողնություն ուղարկելու մասին, անզատասխան մնացին և ժամը 16-ին Սկորեն ստիոված յեղավ թողնել ուղղուտները, վորոնց մեջ ընդամենը մոտ 1000 մարդ եր մնացել։ Ռեղուտներից մեկի պարետը, մայոր Գորտալովը, չհեռացավ ուղղուտից և թուրքերը նրան սվինահար արին։

Քննելով Պլեվնայի գրոհի պլանը՝ չի կարելի չդալ այն յեղակացության, վոր ռուսական գլխավոր հրամանատարությունը դեկավարվում եր վոչ թէ այն տակտիկայով, վոր ըստեղծվել եր 1870—1871 թվերի ֆրանս-պրուսական պատերազմից հետո, այլ այն հիշողություններով, վոր նա ուներ 1856 թ. Սևաստոպոլի դեմ դաշնակիցների կատարած դործողությունների մասին (բազմորյա ոմբակոծություն՝ կրակի ընդժիջումներով)։ 1877 թ. իրադրությունն այլ եր։ Պաշարողական հրետանու փոխարեն, վորը Սևաստոպոլի մոտ ավերեց ռուսական հողապատնեշները, Պլեվնայի մոտ ռուսներն ունեյին միայն դաշտային թույլ հրետանի, վորը համարյա անդոր եր թուրքերի խրամատների դեմ։ Պլեվնայի մոտ ռուսական հետեւակը ոմբակոծության ժամանակ 1—2 կիլոմետր հեռու յեր մնում թուրքական ամրություններից, իսկ Սևաստոպոլի մոտ ֆրանսիացիները Մալախովյան կուրդանում ընդամենը 40 քայլ եյին հեռու ռուսներից։ Սևաստոպոլի պաշտպաններն ամեն լուս դրոհի եյին սպասում, իսկ թուրքերը Պլեվնայի մոտ որմբակոծության ժամանակ մարդկանց փոխադրում եյին ուղղուտներից դեռի ամրությունները։ Սևաստոպոլում դաշնակիցներն ավերում եյին ռուսական պատնեշները և կայազորին հսկայ-

կան կորուստներ եյին պատճառում, իսկ Պլեվնայի մոտ չորս
արվա ոմբակոծությունը լիակատար անհաջողություն ունե-
ցավ: Վերջապես Պլեվնայի մոտ ոռուները զործ ունեյին խիստ
ուժեղացրած դաշտային դիրքերի հետ, և ճակատի դրոհին իւ-
րելի յեր միացնել Ռուման-փաշայի թևերի և նույնիսկ թիկուն-
քի շուրջանցը:

Կենտրոնի զորքերի գործողությունների ժամանակ դրսեոր-
դեց ոռու հրամանատարների ու զորքերի տակտիկական թույլ
ոլատրաստությունը—հետևակի և հրետանու գործողությունների
միջև կապի բացակայությունը, թուրքերի կրակի տակ խիտ
շարքերով արագորեն կարդը կորցնելը, մոտ 1 կիլոմետր հեռա-
վորությունից առանց կանդ առնելու դրոհի զնալը, ըստ վո-
րում բոլոր ռեզերվները միաձուլվում եյին շղթայի մեջ և ըս-
տացվում եր բավական խիտ ու անկարգ դիմ, և, վերջապես,
հարձակման հրացանային պաշտպանության և դրոհի նախա-
պատրաստության լիակատար բացակայությունը: Այս բոլոր
բացասական յերեւյթները պատճառ յեղան, վոր զորքերի ան-
առհման քաջադործությունները միայն մեծ և անտեղի կորուստ-
ների հասցըին:

Միայն դեն. Սկորելեի դորսայունի գործողություններում
և, վոր մենք տեսնում ենք դրոհի համար աստիճանական մոտե-
ցում յելակետային դիրքին, հարձակման նախապատրաստու-
թյուն հրետանու կրակով, դրոհողներին անընդհատ աջակցու-
թյուն եշելոնացրած ռեզերվով և, վերջապես, ոլետի անձնա-
կան որինակ, վորը կանդ առնողներին քաշում եր դեպի դրոհ:
Ինչպես հայտնի յե, զորքերի եշելոնացումը հարվածային խրմ-
րերի մեջ, վոր կիրառում եր դեն. Սկորելելը, իր լիակատար
զարդացումն ստացավ 1914—1918 թ. թ. Համաշխարհային պա-
տերազմի ժամանակ և հանդիսանում է ժամանակակից տակտի-
կայի հիմնական դրույթներից մեկը:

Սեպտեմբերի 11-ի դրոհի անհաջող յելքը ճնշող տպավորու-
թյուն գործեց վոչ միայն բանակի զորամասերում, այլև ցա-
րական Ռուսաստանի ներսում, վորտեղ պատերազմի հաջողու-
թյան նկատմամբ թերահավատ վերաբերմունք առաջացավ:
Յերկու որից հետո թաղավորի նախադահությամբ տեղի ունե-
ցած ուղմական խորհրդում տիրում եր հիասթափություն և
թերահավատություն, թե այդ տարի կարելի յե պատերազմը

չարունակել: Վոմանք նույնիսկ խորհուրդ եյին տալիս հետ
քաշվել Դանուրի այս կողմը, վորպեսզի հաջորդ տարվա զար-
նանը գործողությունները նորից սկսվեն: Վերջապես ընդունվեց
դինվորական մինիստր Միլյուտինի կարծիքը՝ գրոհներից հրա-
ժարվելով՝ պաշարել Պլեման, կորել Ռոման-փաշայի հաղոր-
դակցությունը Սոֆիայի հետ, վորտեղից նա համալրում ու
առաջարներ եր ստանում և մինչև քաղաքը հանձնելը սահմանա-
փակվել ընդհանուր պաշտպանությամբ: Պլեման շրջափակելու
գործողությունները դեկավարելու համար Պետերբուրգից կանչ-
վեց Սեաստոլոլի պաշտպանության հերոս դինվորական ինժե-
ներ զեն. Տուլերենը:

Ռոման-փաշան հասկանում եր իր վտանգավոր գրությունը
Պլեմայում, վոր կարող եր նրան պաշարման հասցնել, ուստի
նա թույլտվություն եր խնդրում հետ քաշվելու դեսի Բալկան-
ները: Թուրքական կառավարությունը մերժեց այդ խնդիրը Կ-
վորոշեց Սոֆիայի խճուղու վրա, Ռիխանիյեում, Պլեմայից 90
էլլումետր հեռավորության վրա ստեղծել միջանկյալ բազա,
վորտեղ և բանակ հավաքել Ռոման-փաշային ազատելու համար:
Սիևույն ժամանակ Մեհմեդ-Ալին իր բանակով պետք և հար-
ձակման անցներ Ռազզրադից: Սեպտեմբերի 21-ին Մեհմեդ-Ա-
լին իր ուժերի մի մասով հարձակվեց Ռուշչուկյան ջոկատի
ոռուսական դիվիզիաներից մեկի գիրքերի վրա: Թուրքերը ջախ-
ջախվեցին և խառն ի խուռն յետ քաշվեցին կարալոմի այն
էողմը: Ռուսները չհետապնդեցին: Այս անհաջողությունից հե-
տո Մեհմեդ-Ալին փոխարինվեց Սուլեյման-փաշայով, վորի վրա
թուրքական կառավարությունը մեծ հույսեր եր դնում:

Յերբ Սուլեյման-փաշան արեւելյան բանակի հրամանատար
հշանակիվեց, ոռուսական հրամանատարությունն ել նրանից վրձ-
ուական գործողություններ եր սպասում Ռուշչուկյան ջոկատի
դեմ, սակայն Սուլեյմանն ել իր նախորդի պես ուժերի անբա-
ժարարություն ողառվակով կատարյալ անզործունեցություն
ցուցաբերեց:

ՌՈՒՍԱԿԱՆ ԶՈՐՔԵՐԻ ԴՐՈՒՅԹՅՈՒՆԸ ԲԱԼԿԱՆՆԵՐՈՒՄ

Գեն. Ռադեցկուն ընդիմադիր Սուլեյմանին փոխարինած
Ռեուֆը ևս ոռուների դեմ վոչինչ չձեռնարկեց՝ սպասելով Սու-
լեյմանի դիմավոր բանակի աջակցությանը: Շիպկայի լեռնե-

բում, ծովի մակերեսույթից 1200—1500 մ. բարձրության վրա, դեռ Հոկտեմբերի սկզբներից սկսվեց աշնանային վատ յեղանակը, իսկ հետո, դեկտեմբերի առաջին որերից սկսվեց դաժան ձմեռը մինչև 20° սառնամանիքներով ու ձյունախառն թիվիներով, վորոնցից խիստ տուժում եյին Շիպկայի լեռնանցքում տեղավորված ոռւսական զորքերը, քանի վոր նրանք ավրում եյին խղճուկ դետնափոր խրճիթներում, վատ եյին սնվում և տաք հաղուստ չունեյին:

Յրտահարների թիվը յերբեմն որական 400 մարդու յերհասնում, նույնիսկ տվելի: Խուսական զորքերը լեռնանցքներում կոխվների մեջ մինչև հունվար կորցրել եյին միայն մոտ 700 մարդ, իսկ հիվանդներ, սառածներ ու յրտահարներ՝ մինչև 9500 մարդ:

Չնայած դրան՝ ոռւս զինվորները պաշտպանում եյին լեռնանցքը: Նկարիչ Վերեչչագինը, վոր անձամբ մասնակցել և այդ պատերազմին, իր վրձինով արտահայտել է ոռւս զինվորի վորքերդական վիճակը Շիպկայի լեռնանցքում՝ իր «Շիպկայում ամեն ինչ խաղաղ ե» նկարում, վորտեղ սլատկերված և ոռւս ժմապահ զինվորը, վորն աստիճարաբ ծածկվում և ձնախտանքուքի մեջ:

ՊԼԵԿԱՅԻ ՊԱՇԱՐՈՒՄԸ ՅԵՎ. ԱՆԿՈՒՄԸ

Հոկտեմբերի 16-ին Պլեկնայի մոտ հառան ոռւսական ոժանդակ ուժերը, այդ թվում զվարդիական ու գրենադերական կորպուսները, և վորոշվեց սկսել Ռոման-վաշչայի սլաշարումը: Որիանիյելից Պլեկնա տանող ճանապարհով անընդհատ շարժումն ապահովելու համար, թուրքերը դադարի միջոցին ստեղծել եյին 5 հենակետեր (ետապներ) փոքրիկ կայազորերով և Որիանիյելում հավաքած սլաշարն ու համալրումը ոռւսական հեծելազորի աչքի առաջ փոխադրում եյին Պլեկնա: Հոկտեմբերի 24-ին գենդուրկոյի զվարդիական կորպուսը հարձակվեց այդ կետերից ուժնառութեղի՝ Գորնիյ Դուրնյակի վրա, վոր Պլեկնայից 15 կմ դեպի հարավ-արևմուտք եր:

Այդ ամրության վրա գրոհելիս առաջին անդամն եր, վոր ոռւս զինվորը կիրառում եր գրոհից առաջ կըակի տակ վերջին 200—300 մետր տարածությունը հաղթահարելու նոր յեղանակը,

այն ե՞ դատ-զատ վաղեվաղքով առաջ անցնելը՝ սպասպործելով
ամենավոքրիկ թակսոտոցներն անդամ— խճուղիների առուները,
փոսերը, տնակների մնացորդները, ծղոտի կույտերը,— և կու-
տակվելով վերջին թաղստոցում, վորտեղից պիտի սկսվելուն:
Տվյալ դեսլքում այդպիսի թաղստոց եր հանդիսանում ուղուախ
արտաքին փոսը, վոր թուրքերի կողմից չեր զնդակոծվում: Կը-
ոիլը տեսեց մինչև աղջամուղջ, և այն ժամանակ, յերբ դեն.
Դուրկոն յելման դիրքերը յետ քաշվելու հրաման եր դրում;
վորակեսղի դրոհն սկսեն հետեւյալ որը, այդ նույն ժամին ուղև
զինվորները սեփական նախաձեռնությամբ միահամուռ դրոհով
արտաքին վիուից լցվեցին ամրությունը և կարճատե ույինա-
մարտից հետո ամրությունը դրավեցին:

Հոկտեմբերի 28-ին մի ոմբակոծությունից հետո հանձնվեց
Հարեան Տելիշը, իսկ մյուս ամրացված ետապները թուրքերը
թողին առանց կուլի: Դրանից հետո Պլեվնան իր 40.000 մար-
դուց բաղկացած կայազորով շրջապատված եր ամրությունների
ողակով, վոր դրավել եյին 120.000 ոռւսական և ոռւմինական
զորքերը, վորով 1 կիլոմետրին ընկնում եր մոտ 3.000 մարդ:

Մինչև հոկտեմբերի վերջը թուրքերը կարողացել եյին Սո-
ֆիայում հավաքել մոտ 35.000 մարդ: Նրանց առաջավոր զո-
րամասերը Մեհմեդ-Ալիի հրամանատարությամբ դտնվում եյին
Արխանիյեյում: Ռուսները չողասեցին, վոր թուրքերը Պլեվնան
փրկելու համար հարձակման անցնեն, այլ նրանց դեմ ուղար-
եցին նորակազմ Արևմտյան ջոկատը դեն. Դուրկոյի հրամանա-
տարությամբ (ընդամենը 45.000 մարդ՝ 174 թնդանոթով),
ինդիր տալով ջախջախել թուրքերին և անցնել Բալկանները:
Միևնույն ժամանակ Սերբիային առաջարկություն եր ուղարկ-
վել՝ վերսկսել ուղմական գործողությունները թուրքերի դեմ:
Նոյեմբերի ընթացքում Գուրկոն Արխանիյին դրավեց, թուրքերին
քւեց դեսլի Բալկանների գլխավոր լեռնաշղթան և դեկտեմբերի
2-ին այստեղ հրաման ստացավ կտնդ առնել՝ նկատի ունենալով
Պլեվնայի մոտալուտ անկումը: Լեռներում, Արաբ-կոնակի լեռ-
նանցքում թուրքերի դիրքերի դեմ ոռուսների ճմեռային ոթեանը
շատ թանդ նստեց. նրանք մեծ թվով հիվանդներ ու ցրտահար-
ներ ունեցան:

Մինչ այդ Պլեվնայում պաշարված Ռաման-իաշայի դրու-
թյունն ավելի ու ավելի յեր ծանրանում, մանավանդ պարենի

տեսակետից, ուստի թուրքերը վորոշեցին ճեղքելով դուբո պաշ
Պլեվնայից և ուղղվել գեղի Որխանիյն, Սոֆիա:

Անձնատուր լինելու առաջարկին Ոսման-փաշան մերժումով
պատասխանեց: Խուսական հրամանատարությանը հայտնի յեր,
վոր թուրքերը ոլատրաստվում են ճակատը ճեղքելով դուբո պաշ
Պլեվնայից, թեև այդ տեղեկություններն այնքան ել լրիվ չեյին:

Լույս դեկտեմբերի 10-ի դիշերը Պլեվնայից դուբո զալով և
Վիդ դետի կամուրջներն անցնելով, թուրքերն արագորեն առաջ
շարժվեցին՝ ծածկված հրածիղների խիտ շղթայով, վորոնց հե-
տեւում եյին մոտակա ոժանդակ ուժերը, ապա ուղերվների մի
քանի եշելոնները: Հարձակմանը զուղորդում եր հրետանային
ու հրացանային հրածդությունը, վորի համար մարտկոցներն ա-
րագ առաջ եյին շարժվում դեպի նոլատակակետը, մի քանի
անդամ կրակում, ապա նորից եյին առաջ նետվում հրածդու-
թյունը շարունակելու համար: Թուրքերի ուխավոր հարվածն
ուղղված եր Սոֆիայի խճուղու լայնքին տեղավորված 3-րդ գրե-
նադերական դիվիզիայի դեմ, վորը չեր սպասում, թե թուր-
քերը կերեան իր առաջ:

Անակնկալ հարձակման շնորհիվ թուրքերն ոկզրում հաջո-
ղություն ունեցան, բայց յերբ խթվեցին դրենադերների շարքե-
րի մեջ, ընկան խաչաձև կրակի տակ: Հարձակումը կանոն ա-
ռավ, ժամանակն արդեն կորցրել եյին, վորովհետեւ արդեն
սկսել եյին մոտենալ ոռոտական ուղերվները: Յեվ կեսորից հե-
տո կովում վիրավորված Ոսման-փաշան համաձայնեց անձնա-
տուր լինել առանց պայմանի: Ընդամենը անձնատուր յեղան
34.000 մարդ:

Բալկանյան թերակղու ոլատերազմի ընթացքի մեջ Պլեվ-
նան խոշոր դեր խաղաց: Թե ինչու 17.000 մարդուց բաղկացած
չոկատը կարողացավ կանգնեցնել ոռոտական բանակի հարձա-
կումը և ապա, ուժեղանալով մինչև 40.000,5 ամսով իր կողմբ
քաշեց այդ բանակի մեծ մասը, այդ հարցի բացատրություննե-
րը պետք է վորոնել վոչ այնքան նյութական, վորքան բարոյա-
կան ընադավառում: Թեթևամիտ, տաղանդից ու ոազմական
դիտելիքներից զուրկ դիսավոր հրամանատարը և նրա անդոր
շտաբը խիստ զարմացել եյին, յերբ անսպասելի կերպով Ոսման-
փաշան յերեացել եր իրենց թեում: Փոխանակ լրջորեն քննար-
կելու այդ փաստը, վոր ամենեին ել լուրջ վտանդ չեր հանդի-

սանում, քանի վոր թուրքերի ուժերը թույլ եյին, շտաբը իրեն
կորցրեց և միանդամայն խմալուխիվ վորոշում ընդունեց— ինչ
գնով ել լինի դրոհել Պլեվնայի վրա և այն ել անօղայման արե-
վելքից: Ռուսական աջ թևում կողմերի փոխադարձ դրությու-
նը, այն և՝ Նիկոպոլում, Պլեվնայից դեպի Հյուսիս 9-րդ կոր-
պուսի ներկայությունը, վորին մոտենում եյին 4-րդ և 11-րդ
կորպուսները, բնականաբար թելաղրում եր մաներ կատարել
Ռոման-վաշայի թեի ու թիկունքի դեմ՝ Հյուսիսից ու արե-
մուտքից հարձակվելու համար: Այդպիսի մաների համար ավե-
լի ևս նորաստավոր պայմաններ ստեղծվեցին սեպտեմբերին,
յերբ ռուսներն ուժերի յեռակի դերադանցություն ունեյին: Փո-
խանակ մաներելու՝ ռուսական դլխավոր հրամանատարությունը
թուրքական ամրությունների վրա յեր հարձակվում ուղիղ ճա-
կատից: Յերբ սեպտեմբերի 11-ին դեն. Սկսելուն ամրացված
ճամբարի դիմը թուրքերի համար ամենավտանգավոր կետում
չեղքեց, ռուսական դլխավոր հրամանատարությունը կենտրո-
նում կատարած անմիտ դրոհների մասնակի անհաջողություննե-
րի աղջեցության տակ նորից տարվեց այն մտքով, թե թուր-
քերը հարձակման են անցնում: սիստովյան կամուրջների մոտ,
և, փոխանակ հաջողությունը զարդացնելու, ուղերիները պա-
հում եր թուրքերին հետ մղելու համար:

Յեթե ուշադրություն դարձնենք այն բանի վրա, վոր արե-
վելյան թեում թուրքական դլխավոր ուժերի ներկայությունը
միայն առաջակալ առանձնացնելու պատճառ դարձավ, այն ել
թուրքերի համեմատությամբ համարյա կրկնակի չափով թույլ
ուժերով, ասլա ել ավելի պարզ կլինի այն յեղրակացությու-
նը, վոր Պլեվնան ստեղծեցին վոչ այնքան թուրքերը, վորքան
ուս հրամանատարությունը, վորը յենթարկվել եր իր առաջին
չկշռադատված տպավորություններին:

Նոյեմբերի վերջին թուրքերը փորձեր արին ոգնելու Ռո-
ման-վաշային: Սուլթանի պահանջով Սուլեյման-վաշան յերեք
անգամ հարձակման անցավ Թուչուկյան ջոկատի դեմ՝ նետվե-
լով մերթ ռուսների հյուսիսային, մերթ հարավային թևերի վր-
բա: Թուրքերի ամենաուժեղ հարձակումը տեղի ունեցավ դեկ-
տեմբերի 12-ին Դանուբի յերկարությամբ: Ռուսները թուրքե-
րին հանդիսացին Մեչկա և Տրեստենիկ դյուլերի մոտ ամրաց-
ված դիրքերում: Կոիվը 2 որ տեսց: Առաջին որը թուրքերը

Դանուբի մոտ գրավեցին առաջին դժի դիրքերի մի մասը, սակայն յերկրորդ որը հարավից մոտեցան ոռոսական ուղղերվածքները և յեռանդուն հարձակման անցնելով, հեծելաղորով խորապես շուրջանցելով թուրքերի թեր՝ նրանց ստիպեցին գրոհները դադարացնել և լրիվ խառնիճաղամբ կերպով նահանջել դեպի մոռչչուկ :

ՌՈՒՍՆԵՐԻ ԱՆՑՈՒՄԸ ԲԱԼԿԱՆՆԵՐԻ ՎՐԱՅՈՎ

(Սխեմա 3)

Յերբ ընկավ Պետքան, վոր 5 ամիս շարունակ կաշկանդել եր իրմույթ ոռոսական բանակի մեծ մասը, ոռոսների դրեւթյունը խիստ բարելավվեց : Այդ ժամանակ ոռոսները Բուլղարիայում ունեցին մինչև 300.000 մարդուց բաղկացած բանակ, վարից 100.000-ը ազատ ուղերվածներն եյին, բացի այդ, թուրքերի ուժը կույլի մեջ եր մտել Սերբիան և նրա որինակին հետեւելու յեր պատրաստվում Հունաստանը :

Պետքայի անկումը և Սերբիայի կույլի դուրս դաւր Կոստանդնուպոլսում շշմեցուցիչ տպավորություն թողին, վորովհեակ այժմ թուրքիայի ուժերը համարյա կրկնակի չափով պակաս եյին հակառակորդի ուժերից : Այնուամենայնիվ թուրքական կառավարությունը վորոշեց դիմադրությունը շարունակել, հույս ունենալով, թե ոռոսների համար անհնարին կլինի ձմեռ ժամանակ անցնել Բալկաններով և մտածելով պատերազմը ձբդակել մինչև յեկրոսլական պետությունների միջամտությունը :

Ողտագործելով ծովային ճանապարհը և Բալկանների հարավում յեղած յերկաթուղիները՝ թուրքերն ոկսեցին ամրոցների քառանկյունուց մոտ 30.000 մարդ տեղափոխել Սուլեյման-փաշայի հետ դեպի Ֆիլիպոպոլ, վորակեսզի այդ բանակը շարժեն դեպի Սոֆիա և դրանով իսկ խանդարեն ոռոսների ու սերբերի միանալուն : Բալկանները պաշտպանելիս անհաջողություն կրելու դեպքում բոլոր զորքերը սկսոք և հետ քաշվեցին դեպի Աղրիանոսոլոլ, վորակեղ արդեն ուժեղ տմբրացիած ճամբար եր պատրաստված :

Ոսման-փաշային դերի վերցնելուց հետո ոռոսական գլխավոր շտաբը վորոշեց ապօմական գործողությունները շարունակել, հաշվի չառնելով, թե ձմեռ է : Հարձակումը դադարեցնելու

մասին խոսք անդամ չեր կարող լինել, վորովհետև բանակը Բալկաններում թողնել՝ կնշանակեր դաժան փորձությունների յենթարկել նրան, քանի վոր տաք հաղուստն ու պարենամթերքը պահասում եր: Բուքերն ու սառցաճաքը Դանուրի վրա, վոր կործանում եր կամուրջները, խիստ սրում ելին պարենամթերքի հարցը:

Դրա համար ել վորոշվեց Բալկաններն անցնել, իչնել հաշավային հովիտները, վորտեղ և՛ տաք եր և՛ կարելի յեր պարենամթերք դտնել, և այնուհետև շարժվել դեղի կոստանդնուպոլիս: Վորոշված եր Բալկաններն անցնել ջոկատ առ ջոկատ, յերեք անդամից: Առաջինը պետք է անցներ զեն. Գուրկոյի Արևմտյան ջոկատը՝ շրջանցելով Արար-կոնակի լեռնանցքը, և յեռների հարավային լանջերի յերկարությամբ պիտի զնար դեպի Շիպկայի թիկունքը, ապա պիտի անցներ զեն. Կարցեկի ջոկատը Տրոյանի լեռնանցքով և վերջապես՝ զեն. Ինադեցկին պետք և Շիպկայի լեռնանցքում շրջանցեր թուրքերի զիրքերը:

Արևմտյան ջոկատի ուժերը Պլեմնայից յեկած ոժանդակ ուժերի հետ կազմում ելին 60.000 մարդ, 318 թնդանոթով: Դեռ նոյեմբերին Գուրկոն սկսեց սղատրաստմէլ Բալկաններն անցնելու: Ռազոմիրցում (Որիանիյելից 40 կիլոմետրի վրա) պարենամթերքի և անասնակերի պաշար եր հավաքվել, կազմակերպված եր հաց թիւելու դործը, հակեր ու փոկեր ելին պատրաստում, հրետանու համար սահնակներ ելին վարձում: Մարտկոցները պետք է դուրս դային չորսական թնդանոթներով, լույսագույն ձիերով: Լեռները դուրս դալուց առաջ մարզիկ ստացան պաքսիմատի 6 որվա պաշար (որական 400 զր.), թեյ ու շաքար, 3 որվա միտ և սպիրտ՝ ամեն առավոտ բաժանելու համար: Գլխավոր շտաբի սպաների կատարած հետախուզությունները պարզեցին, վոր Արար-կոնակի լեռնանցքի խճուղուն մոտ զանվոր թուրքական ամուր դիրքը շրջանցելու համար կար յերեք ուղղություն. 1) Վրաչեշից Ռւմուրդաչ լեռան մրայով (1900 մ.) տանող շամփիղը, 2) Որիանիյելից 8 կիլոմետր դեպի հարավ խճուղուց բաժանվող ճանապարհը, վոր 1350 մ. բարձրությամբ լեռնանցքով տանում եր զեղի: Չուրյակ դյուղը, 3) Ետրոպոլից Բարա-սարի վրայով տանող ճանապարհը: Դեսպի Չուրյակ տանող ճանապարհի սկիզբը կարողացան կարդի բերել շարժման համար:

Շաքիր-փաշայի, թուրքական զորքերը, մոտ 35.000 մարդ, մեծ մասամբ դիրք ելին բռնել Արար-կոնակի լեռնանցքում և փոքր դորամասերով հսկում ելին մյուս անցքերը 70 կմ. հակասով՝ սկսած Լյուտիկովից (Վրաչեցից 15 կմ. արևմուտք) մինչև Զլատիցա։ Շաքիր-փաշան հրաման ստացավ Համառորեն ողաշտուանել Բալկանները՝ սպասելով Սուլեյման-փաշայի դուռնու։

Գուրկոն վորոշեց մի ուժեղ առաջակալ թողնել Արար-կոնակի դիմաց, սահմանափակվել թուրքական աջ թեր դեմ դեմոնստրացիա անելով և շրջանցել ձախ թեր՝ նպատակ ունենալով թուրքերին կտրել Սոֆիայից։

Դեկտեմբերի 23-ին հրաման տրվեց, վոր դեկտեմբերի 25-ին բոլոր դորասյուները դուրս դան։

1) ՊԵՆ. Վելյամինովի աջ զորասյունը (5 դումարտակ, 18 հակադրոն, 16 թնդանոթ) ալետք ե Վրաչեցից դուրս դար, ու Սուրգաչի վրայով դնար դեսի Ժելյավա և առաջակալ դառնալ Սոֆիայի կողմը, դեսի Սոֆիա ուղարկելով իր հեծելազորը։

2) ԳԵՆ. Կատալեյի դիսավոր ուժերը (31 դումարտակ, 16 հակադրոն, 44 թնդանոթ), վորոնք բաժանված ելին ավանդաբարդի ու յերկու եշելոնների, Վրաչեցից սլիտի դնային դեսի Զուրյակ և, լեռներից ցած իջնելով, սլիտի ճակատ կաղմեցին դեսի արևելք։

3) ԳԵՆ. Դանդեվիլի ձախ զորասյունը (9 դումարտակ, 1 հակադրոն, 14 թնդանոթ) ալետք ե դուրս դար Ետրովովից, Բաբա-սարից անցնելով Վրավեր Զլատիցա տաճող խճողին և զործեր լեռնանցքում թուրքերի դիրքերի աջ թեր ու թիկունքից ուղղությամբ։

4) Դիրքերում յեղած զորքերին (20 դումարտակ, 52 թնդանոթ) հրամայված եր հակել թուրքերին և յեթէ հետ քաշվելու վնան՝ կընկակոյս հալածել նրանց։

5) ՅԵՐԱԿ ջոկատ (ընդամենը 141/2 դումարտակ, 9 հակադրոն, 40 թնդանոթ) մնում ելին վորապես առաջակալ աջից Լյուտիկովի դիմաց, Զլատիցայի դիմաց ձախ կողմից, այդ ուղղության վրա կանդնած թուրքական զորքերին հակելու համար։

Յենթադրվում եր լեռների վրայով անցումը կատարել 2 որում և դեկտեմբերի 27-ին իջնել Սոֆիայի հովիտը։

Առանձնապես դժվարություններ բաժին ընկան դեն. Վե-
լյամինովի զորացյունին, վորի ընթացքը նկարագրում ենք ա-
վելի մանրամասն :

Դեն. Վելյամինովի զորացյունի ճանապարհը մի շավիղ էր,
վոր տեղ-տեղ յերկու քայլից ավելի լայնություն չուներ, յեր-
բեմն 45° թեքության եր հասնում, այնպես վոր նույնիսկ ա-
մառն այդ ճանապարհով անցնելը դժվար էր: Այդ ճանապար-
հով հովիսները միայն ամառն եյին այծի հոտեր քշում, ձմեռք
նա սառցապատռում եր, իսկ համեմատաբար հարթ տեղերում
ծածկվում եր ձյունով:

Ժամանակի սղության սրատճառով հարկ յեղավ հրաժար-
վել ճանապարհը նախորոք թեկուղ տարրական չափով կարգի-
քերելուց. ամրողջ դործը սահմանափակվեց նրանով, վոր ճա-
նապարհի սկիզբն աննշան չափով մաքրվեց ձյունից և ձեռք-
բերվեցին յեղներ լծած սահնակներ, վորսկեսղի նրանցով փոխա-
դրեն քանդած թնդանոթները :

Դեկտեմբերի 25-ի առավոտյան դաժան սառնամանիքին ջո-
կատը ճանապարհ ընկավ: Ակղում թնդանոթները տանում եյին
ձիերով, ըստ վորում յուրաքանչյուր թնդանոթի վոխաղբաւ-
թյանն ողնելու համար նշանակված եր մեկ վաշտ: Միաժամա-
նակ դեպի առաջ սապյորներ եյին ուղարկվել, վորսկեսղի սա-
ռույցի վրա աստիճաններ վորեն և շավիղը մարրեն ձյունից:
Սակայն շուտով ստիպված յեղան բոլոր թնդանոթները քանդել
ու բարձել սահնակներին, վորոնցից յուրաքանչյուրին 30 մար-
դու համար վոկեր եյին ամրացված, իսկ հետեից ել հրում ե-
յին 30-ական մարդ: Այժմ արդեն յուրաքանչյուր թնդանոթի
համար յերկու վաշտ եր նշանակված:

Ումուրգաչի ամենադիք վերելքն անցնելիս զորացյունը
խիստ բուքի բոնվեց, հետեյալ որը լուսաբացին շարժումը
վերսկվեց և միայն կես որվա մոտ զորացյունը մինչև դոտի-
ները ձյունի մեջ խրված դուրս յեղավ լիոնանցքի դլուխը, դեր-
չարդկային ջանքերով իր հետեից քարշ տալով մարտկոցները:
Ստիպված յեղան ամրողջ որը նորից անցկացնել ուժեղ քամու
տակ, վոր յերեկոյան դեմ վոխվեց դաժան բուք ու բորանի,
վորից, ինչպես ականատեսներն են տառմ, լեռներում ծովում
կարից, ինչպես կաղնի ծառերը: Յերբ մութն ընկավ, մարդիկ
եյին դարսավոր կաղնի ծառերը:

կամնոր առան ով վորտեղ զտնիում եր, հողնած ու քաղցած, թաղնվելու և տաքանալու: Մեծ ջանքեր եր հարկավոր, վորտեղնաղի աներեակայելի ջանքերից հողնած ու քաղցած հետեակեներին թույլ չտալ քնելու, վորի մասին խնդրում ելին նաև երնք՝ զինվորները, վորակեսղի իրենց վրկեն սառչելուց: Ուժուրգաչից դեպի Ժելյավա իջնելը Հրետանու համար բոլորովին անմատչելի դուրս յեկավ, և Գուրկոն Վելյամինովին թույլատրեց թեքվել դեպի Չուրյակ, վորտեղից դորասյունն անցավ դեպի Ժելյավա: Նախատեսված 2 որվա փոխարեն 6 որից հետառասները, 34 կմ. անցնելով, իջան Սոֆիայէ հովիտը, վորտեղներանց դիմավորեցին արեգակն ու հարավային դարունը: Հունվարի 1-ին Գորնի Բուդորովի մոտ (25 կմ. Տաշկիսենից արեմուտք) Վելյամինովը ջախջախեց թուրքերի հնդաղատիկ ուժեղ ջոկատի հարձակումը, վորոնք հարձակվում ելին Սոֆիայից, և հակադրուհի անցնելով թուրքերին ստիպեց արագորեն հետահանջել նորից դեպի Սոֆիա:

Մյուս զորասյուների անցումը Բալկաններով եր դժվարությամբ քիչ եր զիջում այդ Հերուսական անցումի դժվարություններին:

Դվավոր ուժերն իրենց 16 կմ. ճանապարհը հաղթահարեցին 6 որում, ըստ վորում լեռներից ցած իջնելն ավելի դժվար դուրս յեկավ, քան բարձրանալը: Գուրկոն դեկտեմբերի 27-ից գտնվում եր Չուրյակում, այնուղից եւ դեկտեմբերում եր զորայուների շարժումը: Միայն դեկտեմբերի 30-ին զորքերը մոտեցան Չուրյակին և 31-ին դրոհեցին թուրքերի վրա, վորոնք Տաշկիսենի մոտի դիրքերում համառորեն պաշտպանիում ելին, վորակեսղի քողարկեն նահանջն Արարկոնակից: ՅԵրեկոյան դեմուսներին հաջողվեց հարավից շրջանցելով չարդել թուրքերին: Այդ ընթացքում Շաքիր-իմաշայի զիմայոր ուժերը լեռներից իջան դեպի Ֆելիպպովու տանող ճանապարհը:

Զախ զորասյունը կարողացավ հասնել միայն անտառաղուրկ Բաբասար լեռան դադաթը: Սանամանիքն ու ճյուղախտութերը թույլ չտվին առաջ շարժվել: Յրտահարների մեծ թիվը դեն. Դանդեվիլին հարկադրեց վերապառնաւ Ետրոպու, կորցնելով մոտ 900 մարդ ցրտատար. Նրանցից 53 մարդ սառան:

Յերբ թուրքերն Արար-կոնակը թողին, լեռների խճուղավ շարժվեցին Բալկանների հյուսիսային լանջերում մնացած զորքերը, իսկ հետո նաև ամրող Արևմտյան ջոկատի Հրետանին և շումակները:

Այսպիսով ուղերացիան յերկու որվա փոխարեն տևեց վեց մը, բայց հաջողությունը ձեռք եր բերվել համեմատաբար քիչ կորուստներով—մոտ 600 մարդ սպանված ու վիրավոր և մինչեւ 1000 մարդ ցրտահար:

Բալկաններն անցնելուց հետո Արևմտյան ջոկատի համար մեծ հանարան հանդիսացավ հունվարի 4-ին Սոֆիայի դրավումը, վոր թուրքական ուժեղ ջոկատները թողին առանց կուլի: Այդտեղ ուստական զորքերը հսկայական սպառաներ դատան (հենց միայն ալյուր կար 3·200 մ.) և արժանի հանդիստ առան:

Հունվարի 4-ին Բալկանների ամենաղծվարին մասը հաջողությամբ անցավ գեն. Կարցնի վոքրիկ ջոկատը, վորը կազ եք հանդիսանում Գուրկիոյի և Ռազեցկու ջոկատների միջև:

